Azg Վազ

16 ՅՈՒԼԻՍ 2011 ՇԱԲԱԹ 131(4750)

ISSN: 1829-1651

«3-րդ եւ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում 2014-ից կտրվի 1 մլն դրամ»

Ֆինանսների փոխնախարարն անդրադարձավ միջնաժամկետ ծախսային ծրագրի մանրամասներին

2012-2014 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի ուղղություններին եւ բնակչությանն առավել հետաքրքրող մանրամասներին տեղեկանալու նպատակով հարցազրույցի հրավիրեցինք ֆինանսների փոխնախարար Պավել Սաֆարյանին:

- Պրն Սաֆարյան, կառավարությունը հաստատեց մեր երկրի կարեւոր ֆինանսական փաստաթղթերից մեկը՝ 2012-2014 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը: Կներկայացնե՞ք նրա հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները:

- Միջնաժամկետ ծախսային ծրագիրը օրենքով սահմանված նորմ է, որը բավականին հետաքրքրություն է բյուջետային ծրագրման գործընթացը: Այն Ազգային ժողովում հաստատվելուց անմիջապես հետո սկսվելու է 2012-ի բյուջեի նախագծի կազմումը, որը հիմվելու է միջնաժամկետի ծրագրի ուղղությունների վրա: Ըստ 2012-2014 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը նախատեսված է 2012-ին՝ 4,2 տոկոս, 2013-ին՝ 4,5 տոկոս, 2014-ին՝ 4,8 տոկոս: Ծրագրով նախատեսվում է ՀՆԱ-հարկեր հարաբերակցության տարեկան 0,3-0,4 տոկոսով բարձրացում: 2011-ի համար դա 17,3 տոկոս են՝ հաստատել, բայց եթե տնտեսական աճն ավելի լինի, ապա, ըստ մեր վերլուծությունների, այս ցուցանիշը կարող է լինել 16,7-16,8 տոկոս: Այսինքն, այդ 0,3-0,4 տոկոսով աճը 16,7 տոկոսի նկատմամբ են ավելացրել: Հետեւաբար, հաջորդ տարի հարկային եկամուտները պետք է ավելանան մոտ 66 մլրդ դրամով, ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 17 տոկոս, իսկ 2013-ին՝ 17,4 տոկոս եւ 2014-ին՝ 17,7 տոկոս: Սոցիալական վճարների հավաքումը եկող տարի պետք է ավելանա ՀՆԱ-ի 0,1 տոկոսի չափով եւ կազմի 3,4 տոկոս:

Տես էջ 3

Հարավային Սուդանը դարձավ ՄԱԿ-ի անդամ

ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովը քվեարկել է Հարավային Սուդանը անկախ պետություն ճանաչելու օգտին, հաղորդում է «Ռոյթեր» գործակալությունը:

Այսպիսով, հուլիսի 9-ին անկախ հռչակված պետությունը դարձել է ՄԱԿ-ի 193-րդ անդամը:

Նոր երկիրն արդեն ճանաչել են ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ բուն Սուդանը, որից հարավցիները անջատվեցին 2011-ի սկզբներին կայացած հանրաքվեի արդյունքների հիման վրա: Այն ժամանակ քվեարկությանը մասնակցած ընտրողների ավելի քան 98 %-ը քվեարկեց երկրի հարավը Սուդանից անջատելու եւ անկախ պետություն ստեղծելու օգտին:

Հարավային Սուդանն արդեն ունի իր մայրաքաղաքը՝ Ջուբա քաղաքը, ազգային դրոշը, օրհներգը եւ անկախության այլ ատրիբուտներ: Ակնկալվում է, որ մոտ ժամանակներս կունենա նաեւ սեփական արժույթ:

Հարավի ինքնորոշման հանրաքվեին նախորդել էր 21-ամյա քաղաքացիական պատերազմը, որի ընթացքում ո՛չ առավելապես մուսուլմանաբնակ հյուսիսը, ո՛չ էլ գերազանցապես քրիստոնեաբնակ հարավը չէին կարողացել հասնել ռազմական գերազանցության:

Չնայած փոխադարձ ճանաչմանը, Հյուսիսային եւ

Հարավային Սուդանների միջեւ մնում են տարաձայնություններ սահմանի մոտ գտնվող հարուստ նավթաբերտերի պատկանելության առնչությամբ: Վերջին մեկ ամսում այդ հակասությունները հանգեցրել են բազմաթիվ զինված միջադեպերի:

Հիսլերի հետնորդները

Բոլորին է հայտնի, որ «կազուս-բելի» ունենալու համար Ադոլֆ Հիսլերը «լեհերի կողմից գերմանական խաղաղ բնակչության սպանության փաստեր էր» լուսանկարում: Իրականում դիվերսիա անում էին լեհական բանակի համազգեստ հագած վերմախտի զինվորները:

Հիսլերը վաղուց չկա: Բայց «նրա գործը կենդանի է»: Ոչ միայն եվրոպական նեոֆաշիստներն, այլեւ Ադրբեջանի իշխանություններն են նպատակադրված, որ «խելագար եֆրեյտորին» մարդիկ հիշեն: Եվ, որքան էլ զարմանալի հնչի, «ֆյուրերի հավերժության» ջատագով է դառնում Իլհամ Ալիեւի աշխատակազմը:

Նախօրեին ադրբեջանական՝ գերազանցապես հատուկ ծառայությունների խոսափող լրատվամիջոցները «կայծակ- հաղորդագրություն» էին տարածել, որ Թովուզի շրջանի Ալիբեյլի գյուղում դժբախտ պատահար է տեղի ունեցել, զոհվել է Այգյուն Շախմալիեւան, իսկ նրա մայրը՝ Էլնարա Շախմալիեւան, սպացել մարմնական վնասվածք ազդի շրջանում:

Ամեն երկրում պատահարներն անխուսափելի են: Կարելի է ցավել, որ Թովուզի շրջանում երեխա է զոհվել, իսկ մայրը՝ սպացել մարմնական վնասվածքներ: Բայց Ադրբեջանում հակված են ամեն ինչ, նույնիսկ եթե դա բնական պատահար է, կապել Հայաստանի եւ հայերի հետ: Եվ ահա Իլհամ Ալիեւի աշխատակազմի պատասխանատու Ալի Հասանովը հայտարարել է, որ «այդ դեպքի հետ կապված կտեղեկացվեն բոլոր միջազգային կազմակերպություններն ու խաղաղարար գործընթացին մասնակից կողմերը: Մենք կդիմազերծենք Հայաստանի ասածները, որ իր զինված ուժերը ներկայացնում է որպես հրեշակների»:

Ի՞նչ կապ ունի Ադրբեջանի Թովուզի շրջանի Ալիբեյլի գյուղի տարածքում տեղի ունեցած դժբախտ պատահարը Հայաստանի եւ նրա զինված ուժերի հետ: Բանից պարզվում է, որ «Այգյուն Շախմալիեւան, որ խաղալիս է եղել Թովուզ գետակի մոտ, ջրից հանել եւ տուն է բերել շնիկանման խաղալիք, որը պայթել է, երբ երեխան այն զարկել է սեղանին, ինչի հետեւանքով նա զոհվել է, իսկ մայրը՝ սպացել վնասվածքներ»:

Դեպքի մասին Իլհամ Ալիեւի աշխատակազմի ներկայացուցիչ Ալի Հասանովի «մեկնաբանությունն» այս է: Թե ինչո՞ւ է Ալի Հասանովն այդքան օպերատիվ արձագանքել միջադեպին՝ ինքնին կասկածելի է: Դիտարժան է հատկապես, որ ադրբեջանական լրատվամիջոցներից մեկը գրել էր, թե «Շախմալիեւների ընտանիքը մշտապես բնակվում է Սանկտ Պետերբուրգում եւ Թովուզ հյուր էր եկել բարեկամներին»:

Ամեն դեպքում, որեւէ հստակ փաստ չկա, որ «մահվան խաղալիքն ուղարկվել է հայկական կողմից»: Իրականում անհնար է պարզել, թե ով եւ ինչ նպատակով էր Թովուզ գետակ նետել «շնիկանման խաղալիքը, որի ներսում տեղադրված է եղել պայթուցիկ սարք»: Իլհամ Ալիեւի աշխատակազմի ներկայացուցիչը, սակայն, միանշանակորեն դա համարում է «հայկական զինված ուժերի ձեռքի գործ»:

Զարմանալին այն է, որ նման «դժբախտ պատահարներ», որոնք հաստկապես կապվում են երեխաների հետ, Ադրբեջանում «տեղի են ունենում» այն ժամանակ, երբ միջնորդներն սկսում են խոսել ղարաբաղյան կարգավորման բանակցություններում հավանական առաջընթացի մասին: Այդպես եղավ նախագահների հանդիպումից անմիջապես հետո՝ ընթացիկ տարվա մարտի սկզբներին, երբ Բաքուն հայտարարեց, որ «հայ զինվորի դիպուկահար կրակոցից սպանվել է Աղդամի շրջանի Օրթա Քարվենդ գյուղի բնակիչ Ֆարիզ Բադալովը»: Ադրբեջանական կողմը, սակայն, որեւէ քայլ չձեռնարկեց, որ «միջադեպը» հետաքննվի բոլոր կողմերի մասնակցությամբ՝ ինչպես պայմանավորվել էին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները:

Այսօր Ալի Հասանովը խոսում է մանկահասակ Այգյուն Շախմալիեւայի «սպանության» մասին, բայց դարձյալ չի անում որեւէ ակնարկ, թե «միջադեպը ենթակա է բոլոր կողմերի մասնակցությամբ անաչառ հետաքննության»: Տպավորությունն այն է, որ Իլհամ Ալիեւի վարչակազմի համար էականը ոչ այնքան մարդկանց ճակատագիրն է, որքան քարոզչության համար հերթական առիթը: Իսկ ով շահագրգռված է, նա էլ կարող է «գտնել» առիթը:

Ինչպես ասում են, այդքան պատահականություններ չեն լինում. ըստ պաշտոնական տեսակետի, Օրթա Քարվենդ գյուղի բնակիչ Ֆարիզ Բադալովն ընտանիքի միակ երեխան էր, մեծացել էր անհայր, իսկ Շախմալիեւների ընտանիքը չուներ Ադրբեջանի քաղաքացիություն: Սա արդեն պատահականություն չէ, այլ՝ սարսափելի օրինաչափություն. Իլհամ Ալիեւի հատուկ ծառայություններն ընդունակ են մահվան դատապարտել նույնիսկ անմեղ երեխաներ, միայն թե Ադրբեջանը Հայաստանին «մեղադրելու առիթ ունենա»: Ճիշտ այնպես, ինչպես գերմանական աբվերն էր Լեհաստանի հետ սահմանին խժդժություններ հրահրում, որպեսզի Գեբելսն առիթն ունենար ասելու, որ «պատերազմն անխուսափելի է»:

Ինչ վախճան ունեցան աբվերն ու Գեբելսը՝ հայտնի է: Բայց ի՞նչ վճարեց մարդկությունը, որպեսզի կայանա Նյուրնբերգը: Էականն այս է: Եվ արժե՞ եւս մեկ անգամ միլիոնավոր կյանքերի գնով հասնել նրան, որ միջազգային դատարանը պատերազմի հանցագործ ճանաչի Իլհամ Ալիեւին: Ավելի հե՞շտ չէ հենց այսօր կանգնեցնել նրան: Սա արդեն նրանց խնդիրն է, ովքեր կարծում են, թե ժամանակակից «խելագար եֆրեյտորի» հետ հնարավոր է հասնել որեւէ խնդրի արդարացի կարգավորման:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԱՄՆ-ը տեխնիկական դեֆոլտի շեմին

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման երեկվա դությամբ 36 ժամ էր տվել կոնգրեսականներին՝ որպեսզի վերջիններս պետական պարտքի սահմանային ցուցանիշը բարձրացնելու որոշման համար համաձայնության գան: Այդ որոշումից է կախված, թե արդյոք ժամանակին կվճարվե՞ն օգոստոսին կենսաթոշակները կամ դեֆոլտ կհայտարարի՞ ԱՄՆ-ը նույն օգոստոսին արտաքին պարտավորությունների հետ կապված, կամ թե այս անգամ էլ ժամանակ կշահի՞ կարգավորելու արտաքին պարտքի հարցում ստեղծված լարվածությունը: ԱՄՆ-ի արտաքին պարտքը 14,29 տրիլիոն դոլարից ավելի է եւ հավասարվում է ՀՆԱ-ին: Եթե Օբամային չհաջողվի վերին պարտքի սահմանային ցուցիչը Սենատի կողմից բարձրացնել մինչեւ օգոստոսի 2-ը, ապա ԱՄՆ-ը ստիպված կլինի հայտարարել տեխնիկական դեֆոլտ՝ իր բոլոր հետեւանքներով:

Քրյուսելում Հայաստան-ԵՄ նիստ

Երեկ Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի բանակցությունների 6-րդ լիագումար նիստը: Հայկական պատվիրակությունը գլխավորում էր ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ, գլխավոր բանակցող Կարինե Ղազինյանը: Եվրոպական կողմից բանակցությունները վարում էր ԵՄ եվրոպական արտաքին գործերի ծառայության Արեւելյան Եվրոպայի տնօրեն, գլխավոր բանակցող Գունար Վիգանդը: Կողմերն ամփոփել են բանակցությունների արդյունքները՝ փաստելով, որ էական առաջընթաց է գրանցվել 2010-ի հուլիսի 19-ից սկիզբ առած բանակցային գործընթացում: Հաջորդ լիագումար նիստը նախատեսվում է այս տարվա հոկտեմբերին:

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու թանգարանից գողացված մանրանկարները աճուրդում չեն վաճառվել

Թեոդոս Սպահանի հայոց թեմի առաջնորդարանը (ՍՀԹԱ), վերահաստատելով «**Ազգ**» օրաթերթում տպագրված հոդվածը, որ Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու թանգարանի մանրանկարները գողացված են եւ աճուրդի հանված Անգլիայում, այնուամենայնիվ հաղորդագրության մեջ չի նշում աճուրդի հանող հաստատության, թվականի եւ ընթացքի մասին որեւէ մանրամասնություն: Փաստորեն ՍՀԹԱ պատասխանատուները որեւէ կոնկրետ տեղեկություն չունեն ոչ միայն կատարածի մասին, այլեւ անկարող են պարզել գողության ճշգրիտ կամ մոտավոր թվականը:

Իրանի մեր աղբյուրը դիմել է Ներսես քահանա Ներսիսյանին, որը Լոնդոնում աճուրդներ կազմակերպող հանրահայտ ընկերությունների հայկական գործերով խորհրդատուն է եւ British Museum-ի հայկական, ինչպես նաեւ Քրիստոնյա Արեւելքի բաժնի վարիչը, որը ժխտել է աճուրդի պարագան:

Ինչպես փոխանցում է «Ազգ»-ի աղբյուրը, Ներսես քահանա Ներսիսյանը հունիսի 10-ին էլեկտրոնային հասցեով՝ eghishe@rambler.ru, ստանում է հետեւյալ գրությունը. «Ուղարկում եմ 5 մանրանկար, որոնցից 2-ը՝ Սարգիս Պիծակ եւ Կիրակոս, մագաղաթի վրա, իսկ մյուսները՝ թուղթ: Մյուզիեմը ինչքա՞ն կվճարի դրանց համար: Հարգանքներով՝ Եղիշե»:

Տեր հայրը դիմումը թողնում է անպատասխան: Երկու օր անց հայտնվում են երկու հայեր՝ տեր հոր պատասխանը ստանալու նպատակով: Տեր Ներսեսը հավանաբար հենց առաջին անձն է, որ կարող էր տեղյակ լինել աճուրդից եւ նույնիսկ կանխել այն, սակայն դրա համար իրավասիրոջ՝ Սպահանի առաջնորդարանի հանձնարարականի կարիքն ուներ: Ամենայն հավանականությամբ նա Սպահանի առաջնորդարանի վստահելի մասնագետների ցանկում ներառված չէ, որովհետեւ առաջնորդարանը հարկ չի համարել որեւէ ձեւով դիմել նրան, գուցե եւ ինչ-որ չափով անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար:

Դրա փոխարեն Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանից նրա նամակին պատասխանում են, որ չեն հավանում նրա ոճը, չեն կարող մանրամասնություններ հաղորդել բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված կլինեն խնդրով: Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանից խորհուրդ են տալիս հավելյալ տեղեկությունների համար դիմել Սպահանի հայոց թեմի առաջնորդ Բաբկեն սրբազանին: Վերջինս գրությամբ հորդորում է տեր հորը՝ ազգային գանձերի աղահովությունը չվտանգելու համար խուսափել նման հրապարակումներից, եւ որ «կարեւորը խաղող ուտելն է, ոչ թե այգեպան ծեծելը»: «Անմիջապես հրապարակ ենք իջնում, երբ Նախիջեւանում հայկական խաչքարերն են պղծվում, բայց երբ դա պատահում է մեր աչքի տակ, մեր տնից, չենք ուզում «պահակին ծեծել», պատասխանում է քահանան:

Հ. Հ.

ԱԶԳ

ՀԱՅԱՑԻԿ

Մետրոյից օգտվողների թիվը 20 տոկոսով նվազել է

Թեպետ մետրոյի սակագնի 100-տոկոսանոց թանկացումը նաեւ օբյեկտիվ պատճառներ ունի, սակայն փաստն այն է, որ սակագինը թանկացել է, իսկ մետրոյի կայանները չեն ավելացել: «Սպառողների ասոցիացիա» ՀԿ նախագահ **Արմեն Պողոսյանի** մեկնաբանությամբ՝ վերջին 25 տարվա ընթացքում մետրոյի նոր կայան չի կառուցվել: «Հայաստանում մետրոն չի զարգանում: Իհարկե, բյուջեից է սնվում, սակայն կարիք կա շեշտելու, որ «Լինսի» հիմնադրամի տրամադրած 160 միլիոն դոլարը իշխանությունները ծախսեցին միայն քաղաքի բարեկարգման համար, ինչը սխալ էր: Ռուսաստանից ստացանք 500 միլիոն դոլարի վարկ, ինչն օգտագործվեց շինարարության նպատակով, մինչդեռ դատարկ շենքերը որեւէ օգուտ տնտեսությանը չեն բերում: Այդ գումարները նպատակային չծախսվեցին: Որոշակի գումար կարելի էր տրամադրել մետրոյի բարեկարգմանն ու նոր կայանների կառուցմանը»:

«Հայրենական արտադրողների» միության նախագահ Վազգեն Սաֆարյանն էլ «Տեսակետ» ակումբում հավելում է, որ թեպետ Հայաստանի բյուջեն աղքատիկ է, սակայն քաղաքացիների որոշումը՝ մետրոյի սակագինը 50 դրամից դարձնել 100, ժամանակավրեպ էր: «Քաղաքացիներն իրեն դրել է առաջատար օրերատորի տեղ ու փորձում է օրերատիվ արձագանքել խնդիրներին՝ փորձելով բոլոր խնդիրների մեջ բիզնես տրամաբանություն գտնել: Սակայն կան ոլորտներ, որտեղ կարիք չկա բիզնես որոնելու», նշում է Սաֆարյանը:

Նա շեշտում է, որ Աջափնյակում մետրոյի նոր կայանի կառույցը պետք է իրագործվեր դեռեւս 10 տարի առաջ: Այն ժամանակ նվազագույն ծախսերով հնարավոր կլիներ կայանի կիսաս շինարարությունը հասցնել ավարտին:

«Մինչդեռ այսօր նույն կիսակառույց կայանի համար անհրաժեշտ է 100 միլիոն դոլար»:

«Տեսակետ» մամուլի ակումբը ասուլիսին մասնակցելու հրավեր ուղարկել էր նաեւ Երեւանի մետրոպոլիտենի ղեկավարությանը, սակայն նրանք հրաժարվել էին:

«Մետրոպոլիտենի ղեկավարության մերժումը բազմաթիվ հարցերի պատասխան տալիս է: Նրանք չեն ուզում խոսովանել, որ մետրոյից օգտվողների հսկայական նվազում է գրանցվել», ասում է Պողոսյանը՝ հավելելով, որ իրենց հասարակական կազմակերպությունների կատարած հարցումներով պարզվել է, որ սակագնի թանկացումից հետո մետրոյից օգտվողների թիվը 20 տոկոսով նվազել է: «Քաղաքացիները դա բացատրում են այն հանգամանքով, որ եթե գնի առումով տարբերություն չկա, ապա երկար ճանապարհ չեն կտրի մետրո հասնելու համար եւ երթուղային տաքսու ծառայությունից կօգտվեն»:

Արմեն Պողոսյանն առաջարկում է, որ Հայաստանն անցնի էլեկտրասնուցվող տրանսպորտի: Նա չի հասկանում տրամաբանությունը, որ Հայաստանում արտադրվող էլեկտրաէներգիան չեն օգտագործում տրանսպորտի համար, ու դրա փոխարեն հսկայական գումարներ ծախսելով՝ բենզին ու գազ են բերում, որպեսզի հասարակական տրանսպորտն աշխատի: Նա համոզված է՝ կառավարությունը քայլեր չի ձեռնարկում էլեկտրասնուցող տրանսպորտի անցնելուն, որովհետեւ դա ձեռք չի տա 28 հոգու: «Այդ 28 հոգին երթուղայինների գծերի տերերն են, ովքեր նաեւ պատգամավոր են կամ ունեն բարձր պաշտոններ: 28 հոգու պատճառով պատժվում է 1.5 միլիոն մարդ: Նվազագույն հաշվարկով՝ օրական 600.000 մարդ է օգտվում հասարակական տրանսպորտից: Ամենահամեստ հաշվարկով՝ օրական գծի տերերը միասին ստանում են 60.000.000 դրամի հասույթ»:

Հասարակական տրանսպորտի վերաբերյալ մտահոգություններն ու առաջարկությունները «Սպառողների ասոցիացիա» ՀԿ-ն շարադրել է վարչապետ Տիգրան Սարգսյանին եւ քաղաքապետ Կարեն Կարապետյանին ուղարկված բաց նամակում: Անցել է 8 օր, սակայն գերատեսչությունները նամակին չեն պատասխանել:

Հ. Հ.

ԿԸՀ նախագահը՝ փնտրտուքների մեջ

«Պարտավորվում եմ ընտրական հանձնաժողովի նախագահի պարտավորությունները իրականացնել անաչառ, ՀՀ սահմանադրությանն ու օրենքներին համաձայն»: Սա ոչ պաշտոնական երդման տեքստ է, որի հեղինակն ու կատարողը ԿԸՀ նախագահի պաշտոնում վերընտրված **Գարեգին Ազարյանն** է: «Ուրբաթ» ակումբում «Ի՞նչ է խոսանում անել, որ հասարակության բացասական վերաբերմունքը ընտրությունների հանդեպ փոխվի» հարցին ի պատասխան Ազարյանը նույն տեքստը կրկնեց՝ կանխագուշակելով, որ գալիք ընտրությունները լինելու են ժողովրդավարական:

Ազարյանի բնութագրմամբ՝ ընտրական նոր օրենսգիրքը (ԸՕ) «հեղափոխական» է: Ինքն էլ խոսացել է անաչառ է լինել:

Հիշեցնենք, որ հուլիսի 14-ին նոր ձեւավորված ԿԸՀ նիստում Ազարյանը 7 տարի ժամկետով վերընտրվեց հանձնաժողովի նախագահ:

Ընտրությունների ժամանակ միջադեպ էր տեղի ունեցել: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից հայտարարել էին, որ Գարեգին Ազարյանը մասնակցել է ԿԸՀ անդամների ընտրության մրցույթին, մինչդեռ Ազարյանն ասում էր, որ մրցույթին չի մասնակցել եւ ինքնաբացարկ է հայտնել: Թե իրականում ո՞վ էր ճիշտ, ով՝ սխալ, Ազարյանը պատասխանել չի ցանկանում: Մասնակցել է մրցույթին, թե ոչ՝ ԿԸՀ նախագահը խուսափողական պատասխան է տալիս: Նա առաջարկում է իր ընտրվելու հետ կապված միջադեպին ուշադրություն չդարձնել եւ չխոսել այդ թեմայով: Նրա գնահատմամբ՝ ԿԸՀ-ն շատ անելիքներ ունի. անհրաժեշտ է պատրաստվել առաջիկա երկու տարվա ընթացքում կայանալիք 4 ընտրություններին:

ԿԸՀ նոր կազմավիճակը Ազարյանը նմանեցնում է տեխնիկական մարմնի, որը աշխատելով քաղաքական դաշտում՝ քաղաքական որոշումներ չի ընդունում:

Խոսելով ապագա ծրագրերից՝ Ազարյանը շեշտում է. նախ պետք է ԸՕ հիման վրա նոր որոշումներ ընդունեն, այնուհետեւ 14 ընտրատեղամասում ձեւավորեն հանձնաժողովներ՝ համաձայն ստացված դիմումների: Մինչեւ խորհրդարանական ընտրությունները հանձնաժողովների անդամների համար ուսուցում կազմակերպեն: Համակարգչային ծրագրերի նորացման անհրաժեշտություն կա: Այս ամբողջ «խառնաշփոթը» նկարագրելով՝ Ազարյանը խոստովանում է. «Փնտրտուքների մեջ եմ, առաջարկեք ուսուցանելու լավագույն լուծումը»:

Թե նախորդ ընտրություններում գրանցված կեղծիքներն ինչպես են բացառելու գալիք ընտրություններում, Ազարյանը ծեծված ու ոչինչ չասող պատասխան է տալիս: «Կեղծիքները բացառվում են հասարակության վերաբերմունքը ընտրությունների նկատմամբ փոխելու միջոցով»:

Ընտրություններում ընտրական գործընթացների թիվ մեկ կազմակերպչի գնահատմամբ՝ կեղծված ընտրություններն ու ընտրություններում կեղծիքներ թույլ տալը տարբեր գործընթացներ են: «Կեղծիքներ հնարավոր է, որ լինեն, կարեւորը դրանք բացահայտելն է: Կարեւորն այն է, որ այդ կեղծիքները ամբողջ փաթեթում ցածր տոկոս կազմեն: Դրա համար պետք է մասնակցությունը մեծ լինի, որ ընտրողը հասկանա քվեաթերթիկի գինը»: Քվեաթերթիկը 5000 դրամով վաճառողներին էլ խորհուրդ է տալիս. «Քվեաթերթիկը առաջիկա մի քանի տարվա ձեր եւ ձերի երկրի բարեկեցության գինն է: Այն անգին է»:

ԿԸՀ նախագահն ընդունում է, որ իր կազմակերպած բոլոր ընտրությունների ժամանակ էլ կեղծիքներ եղել են: Մեղավորը բոլորն են՝ ԿԸՀ նախագահից մինչեւ վերջին ընտրողը: Կեծիքներն ընտրություններում իսպառ բացառելը Ազարյանն անհնար է համարում: Ավելին, խոստանում հաճույքով իր տեղը զիջել նրան, ով կարող է ընդհանրապես բացառել կեղծիքներն ընտրությունների ժամանակ:

ԿԸՀ նախագահի գնահատմամբ՝ կարեւոր չէ, թե ովքեր են հաշվում, կարեւորը՝ թե ինչպես են մասնակցում ընտրություններին: Իսկ ընդհանրապես, անկախ ամեն ինչից, ԿԸՀ նախագահը խորհուրդ է տալիս լավատեսությամբ լցվել:

«Մոռայլ չպետք է ընկալել ամեն ինչ, ժպտացե՛ք»:

ՀԱՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Հայաստանը կդիտարկի՞ Աբխազիայի նախագահական ընտրությունները

Աբխազիայի խորհրդարանը նախագահական ընտրություններին դիտարկում անցկացնելու համար հրավերներ է ուղարկել հետեւյալ անձանց՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղրղզստանի, Ղազախստանի խորհրդարանների նախագահներին եւ եվրասիական տնտեսական համագործակցության միջխորհրդարանական վեհաժողովի նախագահին: Նախագահական ընտրություններն Աբխազիայում կայանալու են 2011 թ. օգոստոսի 26-ին: Աբխազիայի նախագահ Սերգեյ Բաղաթը մահացել էր մայիսի 29-ին:

Նավթը խաղաղություն է սիրում

«Հայկական կողմը երբեք չի համաձայնի այնպիսի փաստաթղթի, որում հստակորեն ամրագրված չէ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, Ադրբեջանն էլ երբեք չի համաձայնի Լեռնային Ղարաբաղի անկախությանը», այս միտքը երեկ հայտնել է ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի ղեկավար Կիրո Մանոյանը՝ եզրակացնելով, որ մոտ ժամանակում չպետք է ակնկալել Լեռնային Ղարաբաղի կարգավորման փաստաթղթի ստորագրում: Նրա կարծիքով՝ ցածր է նաեւ ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը, սակայն լիովին բացառել պետք չէ: Բայց եւ՝ «Ի վերջո, նավթը խաղաղություն է սիրում», ասել է Կ. Մանոյանը:

Սերժ Սարգսյանն ընդունել է Կորի Ուդովիցկիին

Նախագահ Սարգսյանը երեկ ընդունել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) ղեկավարի տեղակալ, Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների տարածաշրջանային բյուրոյի տնօրեն Կորի Ուդովիցկիին: Նախագահը բարձր է գնահատել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գրասենյակի գործունեությունը մեր երկրում ՄԱԶԾ աշխատանքների արդյունավետ իրականացման գործում:

«Հայաստանի անկախացումից ի վեր ՄԱԿ-ի կառույցները մշտապես եղել են կառավարության կողքին, եւ մեր պետական կառույցների ամրապնդման, տնտեսության զարգացման գործում շատ մեծ դերակատարություն են ունեցել: Մասնավորապես՝ կառավարության բոլոր ծրագրերում, որոնք ուղղված են աղքատության հաղթահարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, երեխաների, կանանց իրավունքների պաշտպանությանը, գրասենյակն անփոխարինելի աջակցություն է ցուցաբերել»,- ասել է Սերժ Սարգսյանը՝ հույս հայտնելով, որ ապագայում եւս այդ համագործակցությունը նույնքիսի արդյունավետությամբ կշարունակվի:

Քննարկվել են Հայաստան-ՄԱԿ համագործակցության հետագա զարգացման հեռանկարները

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ղեկավարի տեղակալ, Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների տարածաշրջանային բյուրոյի տնօրեն Կորի Ուդովիցկիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչեւան:

Տիկին Ուդովիցկին իր գոհունակությունն է հայտնել Հայաստան-ՄԱԿ գործընկերային հարաբերությունների ներկայիս բարձր մակարդակի կաղակցությամբ եւ պատրաստակամություն հայտնել քննարկումներ ծավալելու հետագա համագործակցության այլ ոլորտներ նախանշելու նպատակով:

Արթուր Բաղդասարյանն ընդգծել է Հայաստանում Եվրոմիության հետ համագործակցության շրջանակներում ընթացող բարեփոխումների համատեքստում ՄԱԶԾ-ի՝ որպես վստահելի գործընկերոջ կարեւոր դերը տարբեր ոլորտներում բարեփոխումային հայեցակարգերի եւ ռազմավարությունների մշակման, ինչպես նաեւ դրանցից բխող գործողությունների ծրագրերի իրականացման գործում՝ որպես օրինակ առանձնացնելով մարդու իրավունքների ազգային ծրագիրը, գենդերային հավասարության հայեցակարգը, ինչպես նաեւ սահմանների համալիր կառավարման ծրագիրը:

Քննարկվել է Վարշավայում հոկտեմբեր ամսին կայանալիք Արեւելյան գործընկերության երկրների գագաթաժողովից հետո Հայաստանում ՄԱԶԾ-ի, ԵՄ անդամ երկրների եւ այլ դոնորների մասնակցությամբ միջազգային համաժողովի կազմակերպման հարցը՝ համատեղ կատարած աշխատանքի լուսաբանման եւ նոր գործընկերների եւ համախոհների որոնման նպատակով:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Անառողջ մթնոլորտ առողջապահական հիմնարկում

Օրերս «**Ազգի**» խմբագրությունն էլեկտրոնային փոստով ստացավ մի նամակ, որտեղ գրված էր Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում ստեղծված անառողջ մթնոլորտի մասին: Նշված էր, որ նամակի հեղինակը նույն հիվանդանոցի աշխատակից Լորա Մովսիսյանն է: Նամակը ստանալուց մեկ օր անց՝ հուլիսի 6-ին «**Ազգը**» հրապարակեց դրա հակիրճ բովանդակությունը: Գրված էր, որ Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցի գլխավոր բժիշկ Արա Ասոյանը բժշկուհի Լորա Մովսիսյանին խիստ նկատողություն է արել, սակայն նկատողությունն անհիմն է եղել: Ըստ նամակի հեղինակի՝ Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցի բժիշկները 5 տարվա ընթացքում աշխատանքային պայմանագրով գիշերային հերթապահությունների համար իրենց հասանելիք աշխատավարձը չեն ստացել. «Դա կոչվում է «ընկերական ծառայություն» մատուցել գլխավոր բժշկին»: Ըստ նամակի՝ բժշկուհի Մովսիսյանը դիմել է դատարան խիստ նկատողությունը բողոքարկելու եւ 5-ամյա հերթապահության ու արտաժամ աշխատանքի դիմաց օրենքով հասանելիք աշխատավարձը ստանալու համար:

Կատարվածի վերաբերյալ «**Ազգը**» զրուցեց նաեւ գլխավոր վարակաբան Արա Ասոյանի եւ հիվանդանոցի մյուս աշխատակիցների հետ: Պարզվում է՝ Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում ամիսներ շարունակ լարված ու նյարդային մթնոլորտ է, ինչի պատճառը կամ առիթը մանկաբույժ-ինֆեկցիոնիստ Լորա Մովսիսյանն է: Արա Ասոյանը պատմում է. «Բժշկուհի Մովսիսյանը հաճախ աշխատանքից շուտ էր գնում եւ ուշ գալիս, ուստի սխիզված էի նրան բանավոր նախազգուշացում տալ: Նախազգուշացումից հետո Լորա Մովսիսյանն ինձ այլեւս չէր բարեւում»: Այնուհետեւ ապրիլի 5-ին՝ ժամը 13.20-ին բժշկուհին աշխատանքից տուն է գնացել առանց գլխավոր բժշկի թույլտվության: «Բայց ես հիմնարկի ղեկավարն եմ եւ ինձ չի կարելի արհամարհել: Այդ օրն անցավ իմ կողքով, շրջվեց մեջքով, արհամարհեց ու գնաց: Նկատողությունը ստացավ հենց դրանից հետո». պատում է Արա Ասոյանը:

Ապա Լորա Մովսիսյանը պահանջել է նկատողությունը չեղյալ համարել, փոխարենը բժշկուհին բացատրություն է գրել, որ աշխատանքից հեռացել է, որովհետեւ իր ծննդյան օրն է եղել: Կատարվածից մի քանի օր անց պարոն Ասոյանը տեղեկացել է, որ բժշկուհին նկատողության վերաբերյալ դիմում-բողոքներ է գրել հանրապետության նախագահին ու վարչապետին, ԱԺ նախագահին, առողջապահության նախարարին, աշխատանքի տեսչություն. «Մի խոսքով դիմում- բողոքներով դիմել է 7 բարձրագույն ատյանի»: Արա Ասոյանը խոստովանում է՝ դիմումների մասին իմանալուց հետո բժշկուհու վրա ջղայնացել է, սակայն հայհոյանքներ չի տվել, մինչդեռ նամակում գրված էր, թե գլխավոր բժիշկը փողոցային հայհոյանքներ է տվել ու սպառնացել ֆիզիկական հաշվեհարդար տեսնել: 7 բարձրագույն ատյանների դիմելուց հետո, սակայն բժշկուհին կանգ չի առել: Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում բարձրացել է անախորժությունների նոր ալիք. Լորա Մովսիսյանն այս անգամ դիմել է ոստիկանություն ու դատախազություն: Արա Ասոյանը նշում է, որ իր հասցեին սուտ մեղադրանքներ են գրվել. «Իբր ես հայհոյանք եմ տվել բժշկուհու ծնողների հասցեին, իբր հայհոյել եմ նրա ծննդավայրը՝ Լեռնային Ղարաբաղը, այսինքն՝ խաղաղական ասառ է կոչնում պատմությանը»: Ապա ոստիկանությունը գործ է հարուցում, ոստիկանները մտնում են հիվանդանոց, լսում բուժաշխատողներին: Ի վերջո, ոստիկանությունն ու դատախազությունը գործը մերժում են: Բաց չթողնելով հարմար առիթը՝ Լորա Մովսիսյանը դիմում է ոստիկանապետին ու գլխավոր դատախազին՝ խնդրելով, որ իրեն տրամադրեն թիկնապահ, քանի որ Արա Ասոյանն իր դեմ մահափորձ է պատրաստում: Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում կրկին ստուգում է անցկացվում՝ այս անգամ արդեն դատախազության հսկողության ներքո, նորից հարցաքննություն է կատարվում, եւ նորից գործը փակում են: Ինչպես գրված էր նամակում, բժշկուհին իսկապես դիմել է դատարան: Իսկ գլխավոր բժշկի հետ հաշտության եզրեր Լորա Մովսիսյանը դեռեւս չի տեսնում:

Արա Ասոյանը նշում է, որ բժշկուհին պահանջում է դատական կարգով չեղյալ համարել իրեն արված նկատողությունը: Հայցով նա նաեւ պահանջում է իրեն վճարել 3,5 միլիոն դրամ, իսկ Արա Ասոյանին աշխատանքից ազատել ու դատապարտել ազատազրկման:

Ինչ վերաբերում է հերթապահությունների ու արտաժամյա աշխատանքների դիմաց չվճարելուն, Արա Ասոյանը նախ բացատրում է, որ արտաժամյա հերթապահությունները վճարելու 2 տարբերակ կա՝ կա՛մ վճարում են գումարով, կա՛մ էլ ելնելով հիմնարկի ֆինանսական վիճակից աշխատած ժամերի դիմաց տալիս են արձակուրդ կամ հանգստյան օրեր: Բոխային բաժանմունքի վարիչ **Գոհար Թամազյանը** հավելում է. «Երբ բժշկուհի Մովսիսյանը ցանկացել է օգտուլ ստանալ, հանգիստ ստացել է»: Ի դեպ, Լորա Մովսիսյանն աշխատում է հենց բոխային բաժանմունքում: Պարոն Ասոյանը փաստում է՝ խոզի գրիպի համաճարակի օրերին կատարած արտաժամ աշխատանքի դիմաց նույնպես Լորա Մովսիսյանը վճարվել է, այնինչ մեզ ուղարկված նամակում գրված էր, թե խոզի գրիպի համամաճարակի ժամանակ կատարած արտաժամ աշխատանքի դիմաց իրեն չեն վճարել, եւ դատարան ներկայացրած հայցով բժշկուհին պահանջում է նաեւ այդ աշխատավարձը: Չնայած Արա Ասոյանը փաստում է՝ արտաժամյա աշխատանքի դիմաց իրենց բժշկուհին վճարվել է, սակայն

«Արդեն հոգնել ենք այս լարված մթնոլորտից, լարվածությունը խանգարում է մեր աշխատանքին», ավելացնում է հիվանդանոցի գլխավոր հաշվապահ **Ալինա Հայրապետյանը**: Հաշվապահը պատմում է՝ Լորա Մովսիսյանը հաշվապահությունից երբեմն արխիվային տվյալներ է ուզել. «Մի քանի անգամ ընդառաջեցի նրան, սակայն ես նրա անձնական հաշվապահը չեմ եւ նրան արխիվային նյութերն անընդհատ տրամադրել չեմ կարող»: Սակայն հիվանդանոցում ով չի ընդառաջում ու չի օգնում Լորա Մովսիսյանին, դառնում է նրա թշնամին: Բժշկուհին սպառնում է եւ մյուս աշխատակիցներին, նրանց շանտաժի ենթարկում՝ ասելով ձեր դեմ էլ բողոքներ կգրեմ: «Այսինքն՝ նրան որեւէ մեկն իրավունք չունի ասելու, թե դու սխալ ես», հավելեց Ալինա Հայրապետյանը:

Իսկ 4-րդ բաժնի վարիչ **Սիմոնյան Էմիլիան** ասում է՝ թեեւ Լորա Մովսիսյանը գրագետ բժշկուհի է եւ լավ գիտի իր գործը, սակայն ընդհանուր եւ անհատ անձնավորություն է. «Ու ամեն ինչի մեջ վատ բան է տեսնում»: Բոխային բաժանմունքի վարիչի փոխանցմամբ՝ Լորա Մովսիսյանի հետ աշխատելը դարձել է շատ դժվար. «Ուզում է ամեն ինչ օգտագործել քո դեմ: Երբեմ չես իմանա՝ ո՞ր ասածիդ դեմ ի՞նչ կգրի: Մենք չէինք պատասում, որ Լորա Մովսիսյանն այստեղ 37 տարի աշխատելուց հետո ամբողջ հիմնարկը կգցեր այսպիսի վիճակի մեջ»:

Բուժաշխատողները նշում են՝ բժշկուհի Լորան իրապես կարծում է, թե հիվանդանոցում միակ մասնագետն ինքն է եւ մյուսների հետ խոսում է արհամարհական տոնով: Մի խոսքով՝ հիվանդանոցի ծանր հոգեբանական վիճակն ազդում է աշխատակիցների վրա, չի բացառվում՝ լարվածությունը կխանգարի եւ հիվանդներին: Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում ստեղծված մթնոլորտը, որը լրատվամիջոցներում ու սոցիալական կայքերում դարձել է քննարկման թեմա, անշուշտ, «խաղում է» հիվանդանոցի հեղինակության հետ: Բայց, ինչպես տեսնում ենք, ստեղծվել է փակուղային վիճակ, եւ բուժաշխատողները՝ հանձինս պարոն Ասոյանի ու Լորա Մովսիսյանի, սպասում են դատական նիստին ու դատարանի որոշմանը: Արա Ասոյանը տեղեկացնում է. «Թեեւ բժշկուհին դիմել է դատարան, բայց նրա իրավաբանը որեւէ անգամ չի եկել հիվանդանոց, չի տեսել ինձ: Բացի դրանից՝ բժշկուհին ասում է, թե ունի ձայնագրություն, որտեղ ես իբրեւ թե հայհոյանքներ եմ տալիս, բայց նման ձայնագրություն չկա: Ոստիկանությունը գործը կարճեց հենց նյութերի բացակայության պատճառով»:

Գլխավոր բժշկի ու վերոնշյալ աշխատակիցների կարծիքները լսելուց հետո «**Ազգը**» զրուցեց նաեւ Լորա Մովսիսյանի հետ: Բժշկուհին նախ ասաց, թե «Ազգին» ինքը նամակ չի ուղարկել ու տեղյակ էլ չէ, թե իր անունից ո՞վ կարող էր անել դա: Նամակը նա չի ուղարկել, բայց երբ համառոտ ներկայացրեցի նամակի բովանդակությունը, Լորա Մովսիսյանն ասաց՝ բովանդակությունը համապատասխանում է իրականությանը. «Սակայն նամակը ես չեմ ուղարկել: Հիմա իմ գործը դատական գործընթացի մեջ է, ու հիմա ձեզ ինֆորմացիա տալ չեմ ուզում»: Հարցին՝ եթե դատարանի որոշումը չգոհացնի Ձեզ, ի՞նչ եք անելու, Լորա Մովսիսյանը պատասխանեց. «Պատրաստ եմ հասնելու մինչեւ միջազգային դատարան: Չարը պետք է պատժվի»: Սպասենք դատարանի որոշմանը:

Ցավոք, նման պատմությունները փոխում են բուժաշխատողների հանդեպ վերաբերմունքը, ուստի հիվանդանոցները հնարավորինս պետք է զերծ լինեն այսպիսի քաքքուկներից:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«3-րդ եւ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում 2014-ից կտրվի 1 մլն դրամ»

1-ին էջից

Սակայն պետեկամուտների կոմիտեն հիմնավորումներ է բերում, որ այս ցուցանիշն աղահովելը բավականին բարդ է: Այդ 0,1 տոկոսը մոտ 18 մլրդ դրամ է, որի հավաքելը կախված է աշխատավարձերի բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման հետ: Պայմանավորվածություն կա, որ այս հարցին մեկ անգամ եւս պետք է անդրադառնանք բյուջեի մշակման փուլում:

- Սրանք եկամուտներն էին, իսկ ինչպե՞ս են դրանք ծախսվելու առաջիկա 3 տարիներին:

- Բնական է, որ ծախսերը կատարվում են ըստ հավաքված եկամուտների: Յուրաքանչյուր տարի նախատեսվող ծախսերից խնայողություններն ու լրացուցիչ եկամուտներն ուղղվում են ըստ առաջնահերթությունների: 2012-ի համար այդ գումարը 19 մլրդ դրամ է, 2013-ին նախատեսվում է 62 մլրդ դրամ, 2014-ի համար՝ 128 մլրդ դրամ: Այս 128 մլրդ դրամը մեզ համար առաջնային է, քանի որ դրա միջոցով պետք է իրականացվեն այն ծրագրերը, որոնք նախագահի նախընտրական ծրագրի հիմքում են դրված: Դրանք պետք է իրագործվեին ավելի վաղ, բայց ֆինանսական ճգնաժամի պատճառով մոտ 2 տարով հետաձգվեցին:

Այսինքն, 2012-ին լրացուցիչ 19 մլրդ դրամից 1,5 մլրդ դրամն ուղղվելու է կրթությանը, 1,3 մլրդ դրամը՝ ԱԺ ընտրությունների ծախսերին, 1,3 մլրդ դրամը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ծախսերին, 2,5 մլրդ դրամը՝ տարբեր ծրագրերին կառավարության համաֆինանսավորմանը, ինչպես նաեւ պաշտպանությանը եւ այլ ծրագրերի:

- Ինչպե՞ս են փոխվելու աշխատավարձերը, նպաստներն ու կենսաթոշակները 2012-2014 թթ.-ին:

- Սկսենք նվազագույն աշխատավարձի չափից՝ 2012-ին լինելու է 32500 դրամ, 2013-ին՝ 35 հազար դրամ, 2014-ին՝ 45 հազար դրամ: Պետական կառավարման մարմինների աշխատողների միջին աշխատավարձը 2012-ին կդառնա 159 հազար դրամ, 2013-ին՝ 185 հազար դրամ, 2014-ին՝ 208 հազար դրամ: Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը՝ 2012-ին 44 հազար դրամից 2014-ին կդառնա 52800 դրամ:

Կրթության ոլորտում աշխատավարձերը նույնպես աճի դինամիկա կունենան: Ներկայիս 117 հազար դրամից 2013-2014-ին՝ 127 հազար դրամ: Այստեղ պետք է նշել, որ միջին աշխատավարձի ցուցանիշի վրա ազդելու է ավագ դպրոցներում ավելի բարձր աշխատավարձերի սահմանումը: Գիտության ոլորտին տրված գումարներով միջին աշխատավարձն այսօրվա 55 հազար դրամի դիմաց 2014-ին կդառնա 67 հազար դրամ: Առողջապահության ոլորտում 1 հիվանդի բուժման միջին գինը 100 հազար դրամ է: Այստեղ աշխատավարձերի մասին չեմ խոսում, քանի որ գումարը տալիս ենք առողջապահական հաստատությանը, որին ավելանում են համավճարը եւ այլն:

Նպաստների չափի վերաբերյալ: Հաշվարկներն արվում են 2014-ին 104-105 հազար նպաստառու ընտանիքների համար, այնքան, որքան հիմա է: Նպաստի միջին ամսական չափն այսօր 26800 դրամ է: 2012-ին դա պահպանվելու է, բայց 2013-ին կդառնա 31 հազար դրամ, 2014-ին՝ 33400 դրամ: Ծրագրված է նաեւ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի ավելացում: Դարձյալ նախագահի նախընտրական ծրագրում կար, որ 3-րդ եւ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 մլն դրամ պետք է տրվի, 5-րդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի դեպքում՝ 1,5 մլն դրամ: Այս ծրագիրը կսկսի իրագործվել 2014-ից:

Կենսաթոշակի միջին չափը 28350 դրամ է, որը հաջորդ տարի պահպանվելու է, իսկ 2013-ին բարձրանալու է՝ կազմելով 30870 դրամ, 2014-ին՝ 39500 դրամ: Ասեմ, որ այս 9 հազար դրամի բարձրացումը 2013-ին բյուջեից պահանջել է 28 մլրդ դրամ: Մենք ունենք 464 հազար կենսաթոշակառուներ:

- Դուք իրատեսակա՞ն եք համարում միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

- Աշխատել ենք ունենալ չափից ավելի իրատեսական եւ անգամ մի քիչ էլ հոռետեսական սցենար: Սա այն նվազագույնն է, որ վստահ եմ՝ կկատարվի: Իհարկե, եթե չլինեն արտասովոր իրադարձություններ՝ ֆինանսատնտեսական ճգնաժամ եւ այլն:

Հարցազրույցը՝
ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Orange-ն առաջարկում է լավագույն սակագինը Վրաստանում ռոմինգի համար

Երեւան, 15 հուլիսի, 2011թ.: Orange-ն այսօր հայտարարեց ռոմինգի մուտքային զանգերի նոր սակագնի մասին: Մինչեւ սեպտեմբերի 15-ը Orange-ի բոլոր ձայնային ծառայությունների բաժանորդների համար մուտքային մեկ րոպեի արժեքը կլինի ընդամենը 40 դրամ, որը լավագույն գնային առաջարկն է շուկայում: Սակագնից օգտվելու համար պարզապես անհրաժեշտ է ակտիվացնել ռոմինգը մեկնելուց առաջ, իսկ որեւէ հավելյալ կոդ հավաքելու կամ լրացուցիչ ակտիվացումներ կատարելու կարիք չկա:

Հիշեցնենք, որ Orange-ն առաջարկում է նաեւ բացառիկ՝ 55 դրամ/րոպե սակագին մուտքային զանգերի համար Թուրքիայում եւ Orange գոտու երկրներում: Orange գոտու մեջ են մտնում այն եվրոպական երկրները, որտեղ գործում են Orange Ֆրանս Տելեկոմ խմբի դուստր օպերատորները, ինչպիսիք են Orange Ֆրանսիան, Orange Իսպանիան, Orange Շվեյցարիան, Orange Միացյալ Թագավորությունը, Orange Լեհաստանը, Orange Ռումինիան, Orange Սլովակիան, Orange Մոլդովան, Orange Ավստրիան, Orange Լյուքսեմբուրգը, ինչպես նաեւ Mobistar-ը Բելգիայում:

Սասունցի մսավորականը (գիտնականը, դասախոսն ու հայրենասեր հայորդին)

Գիտամշակութային մեծ նվաճումներով աշխարհին հայտնի մեր ժողովուրդը աչքի է ընկել վառ անհատականություններով ու նվիրյալներով, որոնք անմնացորդ ծառայել ու ծառայում են իրենց հայրենի երկրին ու ժողովրդին: Այդ մարդանց համար հաստատուն ու հանրօգուտ նկարագիր ունենալը գոյատևումի երեւելի իմաստ է, ընտրած բնագավառների խոր իմացություն: Այս բարձր հատկանիշների ներդաշնակությունը կերաղավորված է կատարյալ հայրենասեր հայի ու քաղաքացու, վաստակավոր գիտնական ու լավագույն մսավորական Գեղամ Եղիշի Կիրակոսյանի կյանքի 79-ամյա տարեգրության մեջ:

Պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի երկարամյա դասախոս, պրոֆեսոր Գեղամ Կիրակոսյանի 80-ամյակը լրանում է այս տարվա հուլիսի 18-ին, սակայն շատ ափսոս, որ նա չի զգալու իր հոբելյանական տարելիցի բերկրանքը, բայց նրա պարած կյանքի իմաստավորված 79 տարիները դեռ երկար են շարունակել տալու բեղմնավոր վաստակի արգասիքը:

Ժամանակն է ստեղծում, ձեւավորում եւ կերտում մարդու դիմանկարը: Մարդ-արարածն պարում եւ գործում է իրեն բաժին ընկած ժամանակի մեջ: Ժամանակները կարող են նպաստել մարդու վեհացմանն ու բարձրացմանը կամ ընդհակառակը: Սակայն ամենակարեւորն ու էականն այն է, երբ պատմական դժնդակ ժամանակներում գործող անհատը ինքն է նպաստում հասարակական մթնոլորտի վեհացմանը, մարդկային փոխհարաբերությունների բյուրեղացմանը, զգացմունքների ու հասարակահանրային կրքերի առողջացմանը:

Գեղամ Կիրակոսյան պատմաբանը իր գիտահասարակական ու մանկավարժական գործունեությունը սկսեց 1960-ական թվականներին: Նրա արմատները ձգվում են դեպի անկրկնելի Սասնո աշխարհը, որտեղից իր ծնողները, բռնագաղթելով 1915 թ. զարհուրելի օրերին, եկել ու հաստատվել էին Թալինի շրջանի Աշնակ գյուղում, որտեղ էլ 1931 թ. ծնվել է Գեղամ Կիրակոսյանը: Նա էլ իր հայրենակից մեծ Սասունցու, տաղանդավոր գրող Մուշեղ Գալշոյանի նման մեծացավ Էրգի կարոտով պարող մեծերի շրջապատում: Հավանաբար իր ծնողների բնօրրան ծննդավայրը, նրանց թողած Էրգի կարոտի զգացումը եւս դեր խաղաց, որ նա հետագայում իրեն նվիրեր հայոց միջնադարյան դժվարին ժամանակաշրջանի եւ Սասունի հերոս ժողովրդի պատմության հարցերի ուսումնասիրությանը:

Աշնակ գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Գեղամ Կիրակոսյանը ընդունվեց Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-բանասիրական ֆակուլտետը: Ավարտելուց հետո 1971 թ. պաշտպանեց թեկնածուական, իսկ 1997թ. դոկտորական ատենախոսություն: Նա չորս տասնյակից ավելի տարիներ դասավանդել է մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետում, զբաղեցնելով ավագ դասախոսի, դոցենտի, ապա պրոֆեսորի պաշտոններ, եղել է համալսարանի կուսխորհրդի, պատմության ֆակուլտետի դեկան: Ֆակուլտետում Կիրակոսյանը դասավանդել է համաշխարհային պատմության նորագույն շրջանը եւ մասնագիտական մի շարք դասընթացներ: Նա սովորել էր ավելի շատ տալ, քան ստանալ եւ բոլոր հարաբերություններում աչքի էր ընկնում պատմաբան-բանասերի բարեխղճությամբ: Ծնողի նման էր վերաբերվում ուսանողների բոլոր հարցերին, բայց դա չէր մեղմում նրա զայրույթը ծույլերի ու անբարեխիղճների նկատմամբ: Անուրանալի են նշանավոր գիտնականի ծառայությունները երիտասարդ գիտական կադրերի, մանկավարժ ուսուցիչների պատրաստման գործում: Ազնվությունը, սկզբունքայնությունը, բարեխղճությունը, պահանջկոտությունն ու պատասխանատվությունը սեփական անձին ու շրջապատի նկատմամբ նրա կենսագրականի բնութագրիչներն էին:

Նվիրյալ ամուսնու եւ ծնողի կոչումն էր, որ սիրում էր Գ. Կիրակոսյանին երբեմն «օտարվել» իր նկարագրից, սիրում էր խոսել ընտանիքի, երեխաների ու թոռների մասին, որոնցով նա հպարտանում էր, քանզի նրա պարզ նկարագիրը թույլ չէր տալիս շատերի նման հեռու պահել իրեն զուտ անձնական միջավայրից:

Նրա գիտական հետաքրքրությունների արդյունքները ամփոփված են 40-ից ավելի գիտական հոդվածներում եւ 4 մենագրություններում: Խոր եւ բազմակողմանի գիտելիքները, միանգամայն ինքնուրույն ու ինքնատիպ դատողությունները, տրամաբանական եզրակացությունների հասնելու ունակությունները հնարավորություն են տվել նշանավոր պատմաբանին քննարկվող հարցերին մոտենալ նորովի:

Նրա պատմագիտական հետաքրքրությունների շրջանակները ընդգրկում են միջնադարյան Հայաստանի հարուստ պատմության հիմնահարցերից մինչեւ իր սիրելի պարերի բնօրրանի՝ Սասունի պատմությունը, հողի եւ արյան կանչով գրված հուշագրությունները: Հենց քննական եւ վերլուծական հմտություններ, հաղթահարելով դարերի խորքերից գալիս եկած դիտարկումներ, ինչպես նաեւ ազգային-ազատագրական պատերազմի միջնաբերդերից մեկի՝ պատմական Սասուն աշխարհի պատմության բարդ ու հակասական ժամանակաշրջանի 14-15-րդ դարերի լիակատար պատմությունը, բացահայտել պատմական իրադարձություններն ու տալ դրանց գիտական բացատրությունները:

Գ. Կիրակոսյանի «Հայաստանը Լանկ-Թեմուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386-1500 թթ.)» մենագրությունը նվիրված է հայոց պատմության միջնադարի քիչ ուսումնասիրված շրջանին:

Նրա պատմագիտական ժառանգության մեջ ուրույն տեղ ունեն հուշագրությունները նվիրված իր հայրենի բնօրրանի պատմությանը՝ «Հողի եւ արյան կանչով» եւ «Էրգիրն է կանչում» աշխատությունները: Վերջինս նվիրված է դեպի Արեւմտյան Հայաստան նշանավոր եկեղեցական ու հասարակական գործիչ, մեծ բարերար Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի կողմից 2000թ. կազմակերպած ուխտագնացությանը:

Հեղինակը խիստ հուզական պատմություն է ներկայացնում Արեւմտյան Հայաստան այցելած բնակավայրերի եւ ավերված հուշարձանների մասին: Միանգամայն հարուստ տպավորություններով բնութագրելով իր անցած ուղին՝ Գ. Կիրակոսյանը նկատում է. «Սիրելի ընթերցող, երջանիկ ճակատագիրը ինձ տարավ հայերի պատմական հայրենիքը՝ Արեւմտյան Հայաստան: Ես անցա նրա չքնաղ եզերքներով, տեսա մշակութային մեծ արժեք ներկայացնող վանքերի, եկեղեցիների, բերդերի ու քաղաքների ավերակները, առանձին տեղերում, դեռեւս կանգուն մնացած ճարտարապետական գոհարներ:

Արդեցի հոգեւոր վերածննդի եւ հայոց անցյալի պատմության հերոսական դրվագների վսեմ զգացմունքների պահեր: Լսեցի մեր նախնիների արյամբ ներծծված հողի տնքացող ձայնը, ավելի շատ արդեցի ափսոսանքի եւ կորստի ցավը, նզովեցի կարոտի ու ցավի պատճառները, հանուն ապագայի անսխալականության դասապարտեցի թույլ տված վրիպումներն ու սխալները»:

Նա տպագիր 200 էջի սահմաններում նկարագրում է Անիից՝ Բայազետ, Արածանիի ափին մկրտությունը, Ալաշկերտի, Վասպուրականի ու Ռշտունիքի, ինչպես նաեւ Մուշի պատմական վայրերի այցելությունները, Սասունը իբրեւ սիրելի նախնիների օրրան, դրախտային խնուսի, Կարինից դեպի Կարս երթուղու պատմությունը:

Ամփոփելով իր հուշագրությունը՝ Գ. Կիրակոսյանը հետաքրքրական ու պատմաբանին վայել եզրափակումով է ավարտում խոսքը՝ գրելով.

«Մեր պատմական հայրենիքում 10 օրերի հրաշք ճանապարհորդությունն անցավ վայրկյանի պես շատ շուտ եւ մենք հոգով ու սրտով հուզված, հաճախ արցունքախառն աչքերով էինք հրաժեշտ տալիս մեր չքնաղ հայրենիքի գեղատեսիլ եզերքներին: Երազային հեռուներում մնացին Սասունը, Մուշը, Վանը, դրախտային Խնուսը, Էրզրումը, Մանազկերտը, Բուլանըղը, Բասենը, Կարսը, Սիփանը, Նեմրութ ու Գոգտռը:

Մնացին իբրեւ կապույտ երազներ, իբրեւ այդ օրերի տեսած ու ապրած անուշ վերհուշ, իբրեւ իրական մորմոք:

Ասում են, թե կապույտ երազները շուտ են իրական դառնում, իսկ սպասումի հույսն անխորտակ է եւ հզոր:

Մեծ հավատով ու անխորտակ հույսով սպասենք մեր կապույտ երազների իրականացմանը»:

2010 թ.-ին լույս տեսավ Գ. Կիրակոսյանի ուշագրավ մի այլ աշխատություն՝ «Սասուն»-ը, որը լիովին արժանի է իր վրա բեւեռելու գիտական հասարակայնության ուշադրությունը: Գեղամ Կիրակոսյանի մեծարժեք ուսումնասիրությունում մանրազնին եւ անաչառ պատմական քննության են ենթարկված հայոց բազմադարյան պատմության հանգուցակետում գտնվող այն հիմնահարցերը, որոնք առնչվում են հայոց ազգային-ազատագրական պատերազմի միջնաբերդերից մեկի՝ պատմական Սասուն աշխարհի մինչ այսօր չմեկնաբանված եւ հիրավի կնճռոտ էջերի լուսաբանմանը:

Հայոց պատմության մեջ կան հիմնահարցեր, որոնց նորովի եւ ամբողջական մեկնաբանման խնդիրը երկար տարիներ սպասել է իր հետազոտողներին, եւ իր վերոնշյալ աշխատանքում արծարծված հարցերի համախմբով եւ ցուցաբերված պատմագիտական մոտեցման բարձր մակարդակով Գեղամ Կիրակոսյանը ապացուցում է, որ ինքը արդարացիորեն պատկանում է բարձրաճաշակ եւ խորագիտակ պատմաբանների համաստեղությանը: Գեղամ Կիրակոսյանի աշխատասիրությամբ ստեղծված այս բարձրարժեք հետազոտությունը ըստ էության պատմական Սասունի պատմությունն ամփոփելու նպատակադրում հետաքնդած աշխատանք է, եւ ինչ-որ տեղ եզակի:

Գրքում հեղինակը կարեւոր տեղ է հատկացրել Սասունի հնագույն անցյալի պատմական հիշողության վերականգնման հարցերին, փորձելով լրացնել այդ հարցի վերաբերյալ պատմագիտության մեջ առկա բացը:

Գեղամ Կիրակոսյանի բեղմնավոր գրչի տակ կենդանացել են նաեւ Սասունի պատմության Բագրատունյաց ժամանակաշրջանի իրադարձությունները:

Չափազանց ուշագրավ է եւ դիտարժան Գեղամ Կիրակոսյանի ամփոփիչ բնույթի եզրահանգումը Սասունի ունեցած հերոսական դերակատարման մասին ընդհանրապես արաբական նվաճումների եւ տիրապետության ողջ ժամանակաշրջանում, բազմաթիվ հետաքրքիր եւ ոգեշնչող օրինակներ են բերվում սասունցիների քաջագործությունների, ռազմական բացառիկ տվյալների եւ ընդունակությունների, ոգու ուժի եւ անկոտրում կամքի դրսեւորումների մասին: Գ. Կիրակոսյանը հետեւության է գալիս, որ միանգամայն օրինաչափորեն հենց Տարոն-Սասունն էր այն աշխարհագրական միջավայրը, որն առաջ սնունդ տվեց «Սասնա ծռեր» հայ ժողովրդական հիասքանչ պատմական էպոսի ձեւավորմանը:

Այս համապարփակ բնույթի, հիրավի մի շնչով ընթերցվող պատմագիտական երկում Գ. Կիրակոսյանը զգալի տեղ է հատկացրել Սասունի տեղագրության, ժողովրդագրական տարաբնույթ հարցերին:

Նշանավոր պատմաբանը մսավորականի բարձր տիպար էր՝ բնավորությամբ պարզ, անկեղծ ու բարյացակամ:

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան

Քաղաքաղեցի հերթական drive-ը

Այնպիսի տպավորություն է, որ կառավարությունը որեւէ գործ ձեռնարկելիս սկզբից սկսելու փոխարեն վերջից է գալիս: Տուն է կառուցում, բայց հիմքը գցելու փոխարեն սկսում է տանիքից:

Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի ստորագրած մի շարք որոշումներ այդ ժանրից են: Քաղաքապետն ընդունում է որոշումներ, որոնք նպաստում են քաղաքին, երբեմն սակայն՝ ոչ քաղաքացուն:

Որ բացօթյա առեւտուրը լուրջ խնդիր է, փաստ է, սակայն մինչ դրա դեմ պայքարելը անհրաժեշտ էր այնպիսի մեխանիզմներ առաջարկել, որ քաղաքացին չտուժեր: Մինչդեռ քաղաքապետը նախ արգելեց բացօթյա առեւտուրը, հետո սկսեց մտածել, թե ինչպես աշխատանքով ապահովի անգործ մնացած առեւտրականներին: Նրանցից շատերը մինչ այսօր աշխատանք չունեն, որովհետեւ քաղաքապետի խոստացած «մինիշուկաները» դեռեւս կառուցված չեն: Արդյոք իշխանություններին ձեռնտո՞ւ է ունենալ մաքուր քաղաք եւ անգործության մատնված շատ քաղաքացիներ:

Քաղաքապետի հերթական «ճոխ» եւ «էլիտար» որոշումն էլ մայրաքաղաքի գերծանրաբեռնվածությունը թեթեւացնելու համար մերձքաղաքային տրանսպորտը քաղաքից դուրս կայանելն էր, որը կրկին առաջացրեց բազմաթիվ քաղաքացիների դժգոհությունը:

Որ մայրաքաղաքի կենտրոնը տրանսպորտային միջոցներից բեռնաթափելու խնդիր կա, ոչ ոք չի ժխտում, սակայն երբ որեւէ գործ են ձեռնարկում, անհրաժեշտ է մինչ որոշում կայացնելը խնդիրը բոլոր տեսանկյուններից գնահատել:

Երեւանին մոտ գտնվող քաղաքներ՝ Աբովյան, Էջմիածին, Արտաշատ, Մասիս, Աշտարակ, Արարատ, բնակիչներից շատերը աշխատում կամ սովորում են Երեւանում:

Փաստորեն այդ քայլով քաղաքապետը կրկնակի դժվարացնում ու թանկացնում է նրանց մուտքը մայրաքաղաք:

Հարց է առաջանում՝ արդյոք հենց այս պահի՞ն էր նպատակահարմար բեռնաթափել Երեւանի կենտրոնը, սոցիալական այս ծանր վիճակում հերթական հարվածը հասցնել բնակիչներին:

Քաղաքապետը որոշել է, որ վերջնականգառները պետք է լինեն քաղաքից դուրս գտնվող ավտոկայաններում, արդյոք նեղություն քաշե՞լ է մտածելու, թե մարդիկ ինչպես են հասնելու Երեւան: Պետք է առավել հարմար վերջնականգառներ ընտրել, որպեսզի վերոնշյալ վայրերից բոլոր ուղղություններով հասարակական տրանսպորտ աշխատի, իսկ հարեւանությամբ գործի մետրոն: Քաղաքապետի առաջարկած վերջնականգառները նման հնարավորություններ չունեն: Հետեւաբար Երեւան հասնելու համար քաղաքացին ստիպված է երեք տրանսպորտ փոխել՝ կորցնելով մոտ 2 ժամ եւ հավելյալ գումար:

Ենթադրենք էջմիածին քաղաքի բնակչուհի տիկին Աշխենը աշխատում է Նորքի զանգվածի հիվանդանոցում: Էջմիածին-Երեւան երթուղային տաքսին արժե 250 դրամ: Ավտոկայանից մինչեւ Մաշտոցի պողոտա հասնելու համար պետք է կրկին երթուղային տաքսի նստել, որովհետեւ ավտոկայանից դեպի Նորքի զանգված գնացող տրանսպորտ չկա: Իսկ քաղաքի կենտրոնից կրկին ստիպված լինի 100 դրամ վճարել տեղ հասնելու համար: Եվ այդպես ամեն օր:

Որ երկրում սոցիալական վիճակն օրեցօր վատանում է՝ փաստ է: Տրանսպորտային միջոցների, սննդամթերքի ու ծառայությունների գները բարձրանում են, իսկ աշխատավարձն ու թոշակը մնում նույնը:

Նման անտարբեր գործելակերպն է նպաստում, որ իշխանությունները վաստակում են հասարակության անվստահությունը, հիաթափությունն ու դժգոհությունը:

Իսկ քանի որ երկրում «մի կարգին ընդդիմություն էլ չկա», որ ճնշում գործադրի իշխանությունների վրա, հասարակ քաղաքացուն մնում է միայն մեկ ելք՝ պայքարելու այլ ձեւեր գտնել:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

PKK-ի հետ կռիվներում սպանվեց 13 թուրք զինծառայող

Նույն օրը Դիարբեքիրում ինքնավարություն հռչակեց Ժողովրդավարական հասարակության կոնգրեսը

Հուլիսի 14-ի առավոտյան Իզմիրի մոտակայքում ուսումնամարզական թռիչքի ժամանակ խորտակվեց թուրքական ռազմական ինքնաթիռը, զոհվեց 2 օդաչու: Ցերեկը Թուրքիայի ազգային մեծ ժողովում՝ Մեջլիսում, վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության պատվիրակությունը բրդերի «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության ներկայացուցիչների հետ բանակցություններ էր վարում՝ համոզելու համար վերջիններիս, որ վերջ տան Մեջլիսի աշխատանքները բոյկոտելու արարքին:

Բանակցությունները որեւէ արդյունքի չհանգեցրին, սակայն կողմերը երկուսեք նշեցին, որ դրական ընթացք են ունեցել: Դա «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը Մեջլիսի աշխատանքներում ներգրավելու հույսեր էր ներշնչում, սակայն դրանք ի չիք դարձան, երբ Դիարբեքիրից Անկարա հասավ 13 թուրք զինծառայողի սպանության լուրը: Սպանվածները ծառայում էին հատուկ նշանակության զորքերում եւ մասնակցում շաբաթ օրը Դիարբեքիրում առեւանգված երկու զինծառայողին եւ 1 բուժաշխատողին հայտնաբերելու համար ձեռնարկված գործողություններին, որոնք կենտրոնացել էին համանուն վիլայեթի Սիլվան գավառի մոտակայքում:

Տեղանքը լեռնային է եւ անտառածածկ: Որոնման աշխատանքներն իրականացնելիս զորամասը կռվի է բռնվում PKK-ի մարտիկների հետ, որի հետեւանքով 13 թուրք զինծառայողը սպանվում է, 7-ը վիրավորվում, իսկ հակառակորդը տալիս է 7 զոհ: PKK-ի «ահաբեկիչների» հետ բռնկված կռվում 13 զինծառայողի սպանությունը, այն էլ՝ օրը ցերեկով, սառը ցնցուղի տրավորություն է գործում Անկարայում: Վարչապետ Էրդողանը, որն ինքնաթիռով Սամբուլ էր մեկնում, իսկույն վերադառնում է Անկարա: Վարչապետարան են շտապում թուրքական զինված ուժերի շտաբի պետը, ցամաքային զորքերի եւ ժանդարմերիայի զորահրամանատարները, ներքին գործերի նախարարն ու Ազգային հետախուզական կազմակերպության՝ MIT ղեկավարը:

Ավելի քան 1,5 ժամ տեւող հանդիպումից հետո ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Էրդալ Ձեյլանօղլուն, ժանդարմերիայի գլխավոր հրամանատար, բանակի գեներալ Նեջդեթ Օզելը, ներքին գործերի նախարար Իդրիս Նաիմ Շահինը, փոխվարչապետի ուղեկցությամբ իսկույն ուղեւորվում են Դիարբեքիր: Միջադեպը դատապարտում է Մեջլիսի նախագահ Ձեմիլ Չիչեքը, չմոռանալով զգուշացնել «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը, թե պետք է ճշտել դիրքերը, եթե թուրքական պետության կողքին չեն, կնշանակի՝ PKK-ի հետ են:

Չիչեքիին հետեւեց նախագահ Աբդուլլահ Գյուլի՝ սպանությունը դատապարտելով նույն ոճով դատապարտող հայտարարությունը, ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունների ղեկավարները 13 թուրք զինծառայողների սպանության համար մեղադրեցին վարչապետ Էրդողանին, իսկ վերջինս ցավակցական ուղերձ հղեց զինված ուժերի գլխավոր շտաբի պետին: Թուրք զինծառայողների սպանության համար PKK-ին դատապարտեց նաեւ ԱՄՆ պետքարտուղարությունը՝ ընդգծելով. «Ահաբեկչության դեմ պայքարում մենք աջակցում ենք Թուրքիային եւ մեր աջակցությունը կշարունակվի նաեւ հետայսու»:

Գալով բրդերի «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը, ապա նրա ղեկավարությունն էլ միջադեպի առնչությամբ հայտարարեց. «Մենք բոլորս խորապես վշտացած ենք, հուսանք, որ սա կլինի վերջին վիշտը, միջադեպի գլխավոր պատասխանատուն քաղաքական այն շրջանակներն են, որոնք փոխանակ հարցի (բրդական) կարգավորման մասին մտածելու, առաջնորդվում են չկարգավորվածությունն ապահովելու առաջադրանքով»:

Այդ ընթացքում թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը տարածեց հաղորդագրություն, թե ահաբեկիչների ծուղակում հայտնված թուրք զինծառայողների վրա նռնակ են գցել, որոնք մահացել են առաջացած հրդեհից: Հրդեհի վարկածը նույնիսկ թուրք լրագրողներին չի բավարարել, որ նրանք այդ մասին հատուկ հարցրել են ներքին գործերի նախարարին, թե դա ինչպես է առաջացել: Իսկ վերջինը պատասխանել է. «Ներկա պահին դա կարեւոր չէ»: Իհարկե, նախարար Շահինը չէր կարող ասել, որ փառապանծ թուրքական բանակի զինվորներին վայել չէ սպանվել PKK-ի մարտիկների հետ մերձամարտում՝ կրակոցից, այդ իսկ պատճառով էլ հորինվեց հրդեհի վարկածը:

Հատկանշական է, որ Անկարան դեռեւս չհաղթահարած 13 զինծառայողի սպանության պատճառած ցնցումը, միջադեպից մի քանի ժամ հետո, հենց Դիարբեքիրում, Ժողովրդավարական հասարակության կոնգրեսը ինքնավարություն հռչակեց: Այդ մասին երեկվա համարում նշել են թուրքական թերթերը, մասնավորապես՝ «Աֆշամը», ըստ որի՝ կոնգրեսն այդ որոշումն ընդունել է Դիարբեքիրում հրավիրված նիստի ավարտին, իսկ հաղորդագրությունը ընթերցել է «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության ու կոնգրեսի համանախագահ Այսել Թուղլուքը:

Ահա թե ինչ է ասել նա. «Հիմնահարցը (բրդական) կարելի է լուծել միայն այն դեպքում, եթե բրդերը պաշտոնապես ճանաչվեն իբրեւ ժողովուրդ եւ համահավասար իրավունքներ ստանան երկրում: Աշխարհում չկա մեկ այլ ժողովուրդ, որի իրավունքները ոտնահարված լինեն այնքան, որքան ոտնահարվում են 40 մլն բուրդ ժողովրդինը: Մենք կարող ենք մեզ կառավարել, ունենք դրա ուժն ու կամքը եւ ժողովրդավարական ինքնավարություն ենք պահանջում ոչ միայն մեզ, այլ Թուրքիայում բնակվող բոլոր ժողովուրդների համար: Ժողովրդավարական ինքնավարությունը պետության փլուզում չի նշանակում, այլ ենթադրում է սեփական աշխարհագրությունում կառավարմանը ժողովրդի մասնակցությունը: Ժողովրդավարական ինքնավարությունը ոչ թե պետական խորհրդանիշների փոփոխություն է, այլ ընդհանուր սահմաններում համատեղ արժեքների ֆոնին ձեռք բերված հասարակական համաձայնագիր: Մենք համատեղ հայրենիք հասկացության հենքի վրա բուրդ ժողովրդի անունից հռչակում ենք մեր ժողովրդավարական ինքնավարությունը: Կոչ ենք անում թուրք ժողովրդին համերաշխության մեջ լինել մեզ հետ»:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՆ

Հ. Քլինթոնը Սամբուլում կխնարկի ռադարների հարցը

ԱՄՆ վարչակազմը դեռ չի որոշել, թե Հարավային Եվրոպայի որ երկրում է տեղադրելու հակահրթիռային պաշտպանության համակարգի ռադարը: Այդ մասին լրագրողներին հայտնել են պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչները, որոնք հուլիսի 15-16-ը սամբուլյան այցի ժամանակ ուղեկցում են պետքարտուղար Հիլարի Քլինթոնին:

«Առայժմ որոշում չի ընդունվել ռադարի տեղադրության վայրի առնչությամբ, նշել են նրանք: Բայց այդ հարցը կխնարկվի Թուրքիայի կառավարության հետ»: Քլինթոնի Թուրքիա մեկնելու նախօրեին ամերիկյան Foreign Policy հանդեսը հաղորդեց, որ պետքարտուղարը արդեն շաբաթ օրը կարող է Սամբուլում ստորագրել համապատասխան համաձայնագիր:

Թուրքիայում հակահրթիռային պաշտպանության ռադարի տեղադրման դեմ արդեն արտահայտվել են մի շարք հանրապետական սենատորներ, այդ թվում՝ Ջոն Քայլը եւ Մակ Քիրկը: Քլինթոնին հղած նամակում նրանք ընդգծել են, որ ձեռնտու չեն Անկարայի առաջ բաված պայմանները, մասնավորապես՝ այդ ռադարի տվյալները Իսրայելի հետ չկիսելու պահանջը:

Հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի հետ կապված հարցերը փորձաքար են դարձել Մոսկվա-Վաշինգտոն հարաբերություններում: Ռուսաստանը պահանջում է իրավաբանական երաշխիքներ, որ Եվրոպայում ստեղծվող հակահրթիռային պաշտպանության համակարգը չի ուղղվի իր դեմ:

Պ. Ք.

ՏՐԻՊՈԼԻ

Քադդաֆին Սարկոզիին անվանեց «հոգեկան հիվանդ» եւ «պատերազմական հանցագործ»

Լիբիական հեղափոխության առաջնորդ Մուամմար Քադդաֆին Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին անվանել է «հոգեկան հիվանդ» եւ նրան մեղադրել է պատերազմական հանցագործությունների մեջ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Քադդաֆիի կարծիքով, Լիբիայի ժողովրդի դեմ «խաչակրաց արշավանքը» գլխավորած Ֆրանսիայի նախագահի գործողությունները Ֆրանսիան մտցրին անիմաստ պատերազմի մեջ: Քադդաֆին Սարկոզիին անվանել է «պատերազմական հանցագործ, որը արատավորեց ֆրանսիական ազգի պատմությունը»:

Այս հայտարարություններն արվել են բարձրախոսների միջոցով, Տրիպոլիում Քադդաֆիի կողմնակիցների բազմամարդ ցույցի ժամանակ: Քադդաֆին ինքը չէր մասնակցում միջոցառմանը, բայց ժողովուրդը խանդավառությամբ էր ընդունում նրա խոսքերը: Քադդաֆին նաեւ հայտարարել է, որ եկել է վճռական ճակատամարտի ժամանակը, եւ իր կողմնակիցներին կոչ է արել պատրաստվել Բենգազի եւ Միսուրատա քաղաքների վրա արշավելուն: Այդ քաղաքները արդեն մի քանի ամիս լիբիացի ապստամբների ձեռքին են:

Լիբիայի պատերազմի ամիսներին Նիկոլա Սարկոզին կոչ դիրք էր բռնել Մուամմար Քադդաֆիի հանդեպ: Մասնավորապես Ֆրանսիան դարձավ առաջին երկիրը, որը մերժեց գնդապետ Քադդաֆիի օրինականությունը եւ մարտի 10-ին ճանաչեց ապստամբների Ազգային անցումային խորհուրդը՝ որպես Լիբիայի միակ օրինական իշխանություն:

Հուլիսի 11-ին Քադդաֆիի որդին՝ Սեյֆ ալ Իսլամը հայտարարեց, որ իր հոր կառավարությունը բանակցում է Փարիզի հետ: Ֆրանսիայի ԱԳՆ-ում հաստատեցին այդ տեղեկությունը, սակայն ավելացրին, որ բանակցությունների շրջանակներում ամեն դեպքում նախատեսվում է Մուամմար Քադդաֆիի հրաժարականը:

Արաբական երկրները հիասթափված են Օբամայից

Բարաք Օբամայի վարչակազմի եւ անձամբ ԱՄՆ նախագահի վարկանիշները արաբական երկրներում ներկայումս ավելի ցածր են, քան ժամանակին եղել էին Ջորջ Բուշ կրտսերինը եւ նրա վարչակազմինը: Այդ մասին հաղորդում է «Վաշինգտոն թայմս» թերթը՝ վկայակոչելով Ամերիկյան արաբական ինստիտուտի անցկացրած հարցման տվյալները:

Եգիպտոսում, Հորդանանում, Լիբանանում, Մարոկկոյում, Սաուդյան Արաբիայում եւ Արաբական Միացյալ Էմիրություններում անցկացված հարցման մասնակիցների մեծ մասը կարծում է, որ Օբաման չի արդարացրել իր հետ կապված հույսերը եւ չի կատարել Կահիրեում 2009-ի հունիսի 4-ին տված խոստումները: Այն ժամանակ ԱՄՆ նախագահը հայտարարել էր իսլամական աշխարհի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների «նոր դարաշրջանի» գալստյան մասին: Նա կոչ էր արել վերջ դնել «փոխադարձ կասկածամտությանը եւ երկպառակություններին»:

Օբամայից ամենից շատ հիասթափված են Լիբանանում: Այնտեղ հարցման մասնակիցների միայն 1 %-ն է կարծում, որ նա իրոք կատարել է տված խոստումները: Ընդհանուր առմամբ Ամերիկայի քայլերին ամենից փիչ հավանություն են տալիս Եգիպտոսում (5 %): 2008-ին՝ Ջորջ Բուշի նախագահական ժամկետի վերջնական փուլում այդ ցուցանիշը կազմել էր 9 %: Սաուդյան Արաբիայում ԱՄՆ-ի քայլերը դրական է գնահատում հարցման մասնակիցների 30 %-ը:

Հարցման արդյունքները վկայում են, որ արաբներին առավել մեծ դժգոհություն են պատճառում Պաղեստինի հարցի կարգավորման ուղղությամբ Օբամայի ձեռնարկած գործողությունները: Մարոկկոցիների 56 %-ը, լիբանանցիների 84 %-ը եւ հորդանանցիների 74 %-ը կարծում են, որ իրավիճակը Պաղեստինում միայն վատթարացել է: Միեւնույն ժամանակ, Մարոկկոյում, Հորդանանում եւ Եգիպտոսում Պաղեստինի խնդրի լուծումը համարում են ամերիկա-արաբական հարաբերությունների ամրապնդման կարեւորագույն գործոն:

Ուսամա բեն Լադենի սպանությունը նույնպես վնասեց ԱՄՆ-ի վարկին: Բոլոր վեց երկրներում հարցման մասնակիցների կեսից ավելին բացասաբար է վերաբերվում ամերիկացիների այդ հատուկ գործողությանը: Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ի լիբիական ռազմարշավին ԱՄՆ-ի մասնակցությանը, արաբները դրան վերաբերվում են կամ բացասաբար, կամ էլ անտարբեր են:

Պենտագոնը խոստովանեց 24 հազ. ֆայլի կորուստը

ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Ուիլյամ Լինը խոստովանել է, որ 2011-ի մարտին Պենտագոնը ենթարկվել է կիբեռնետիկական գրոհի, որի հետեւանքով տեղի է ունեցել պատմության մեջ նրա տվյալների խոշորագույն կողոպուտը: Խոսքը 24 հազ. ֆայլի մասին է:

Պենտագոնի տվյալներով՝ գերատեսչության համակարգչային ցանցի վրա գրոհը կազմակերպել են օտար պետությունները: Այլ մանրամասնություններ չեն նշվում: Լինը չի պատմել, թե ինչ կարգի տեղեկություններ են գողացվել:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ անցյալում ռազմական գերատեսչությունը կիբեռնետիկական գրոհների համար հաճախ մեղադրել է Ռուսաստանի եւ Չինաստանի համակարգչահեներին:

Լինը մարտյան կիբեռնետիկական գրոհի մասին պատմել է իր ելույթում, որը նվիրված էր համակարգչային անվտանգության ապահովման ասպարեզում պաշտպանության նախարարության նոր ռազմավարությանը: Նրա խոսքերով՝ Պենտագոնը ամենից շատ վախենում է ահաբեկչական խմբերի եւ «ելուզակ» երկրների կազմակերպած համակարգչահենային գրոհներից: ԱՄՆ ռազմական զորությունը սթափորեն գնահատող պետությունները չեն համարձակվի բացահայտ հակամարտության մեջ մտնել ամերիկացիների հետ: Մինչդեռ, ահաբեկիչների ձեռքին գաղտնի տվյալների հայտնվելը կարող է հանգեցնել անչափ լուրջ եւ անկանխատեսելի հետեւանքների:

Պենտագոնի աշխատանքում ընդհանուր առմամբ ներգրավված են ավելի քան 15 հազ. համակարգչային ցանց եւ մոտ 7 մլն համակարգիչ՝ աշխարհի տասնյակ երկրներում:

Հուլիսի 12-ին հաղորդվել էր Պենտագոնի կապալառու Booz Allen Hamilton ընկերության սերվերի կոտրվելու մասին: Դրա հետեւանքով Anonymous խմբի համակարգչահենները ստացել էին ավելի քան 90 հազ. ամերիկացի զինծառայողների էլեկտրոնային փոստի հասցեներ:

«Հայկական համայնապատկեր» մրցույթին ներկայացված երկու ֆիլմերը

Կինոգետ Միխայել Սամբոլցյանը երեկ ներկայացրեց փառատոնի «Հայկական համայնապատկեր» մրցույթին ներկայացած երիտասարդ հայ ռեժիսորներ Վահան Խաչատրյանին՝ «Սուրբ Խաչն առանց խաչի» եւ Հարություն Շահյանին՝ «Բեռնելով կյանքս» ֆիլմերը: «Իմ կարծիքով «Բեռնելով կյանքս» ֆիլմը «Հայկական համայնապատկեր» մրցույթի ամենահետաքրքրական ֆիլմերից է, որովհետեւ պատկանում է ամենաբարդ ժանրին թե գրականության եւ թե կինոյում, դա խոսքովանության ժանրն է: Երբեմն այդ ժանրով հրապուրվելով, մարդ կարող է հրապուրվել ինքն իրենով եւ ներկայացնելով ցույց տալ ավելի լավ, քան ինքը կա: Հարություն Շահյանի 37 րոպեանոց ֆիլմը երիտասարդ ընտանիքի տղամարդու անելանելի հիվանդ վիճակի մասին է: Նա փորձում է կյանքում լուսավոր կետեր փնտրել: Զինվորական ծառայությունն ավարտելուց մի քանի օր առաջ ֆիլմի հերոսը հիվանդանում է շիզոֆրենիայով եւ զորացրվում: Այստեղից թլ սկսվում են բոլոր խնդիրները; Ինստիտուտ, ընտանիք, երեխա, ամենօրյա պարտադիր սրսկումներ: Դեղ գնելու հնարավորություն չունեցող երիտասարդը ստիպված է հանցագործություն անել: Պարտքեր, աշխատանքի որոնում, միամիտ եւ անզգույշ քայլեր, որոնք ի վերջո բանս ընկնելու իրական նախապայմաններ են լինում:

«Ազգի» հարցին, թե ինչպես մտահղացավ այդ սցենարով ֆիլմ նկարել, ռեժիսորն ասաց, որ մի առիթով տեսել է, թե ինչպես 50-60 շիզոֆրենիայով տառապողներ դեղի համար ժամերով հերթ են կանգնում ու էլի շատերը չեն կարողանում ստանալ հասկացված անվճար «ինսուլինը»: Իսկ երիտասարդը, որը նույնպես չի կարողանում օգտվել օրենքով հասանելիք այդ դեղամիջոցից, ստիպված է իր գլխի ճարը տեսնել: Երիտասարդ ռեժիսորը ցանկություն ունի էքսպերիմենտալ ֆիլմերի ոճը շարունակել, վերհանելով մեր երկրում անհատների, մարդկային ճակատագրերի ու նրանց շրջապատող միջավայրի մասին: «Այսօր ինտերնետի միջոցով ամբողջ աշխարհն է կապվում իրար: Ինտերնետի հնարավորությունը ֆիլմ դիտելու տեսակետից մի կողմից լավ է, մյուս կողմից՝ վատ, քանի որ խանգարում է հանդիսատեսի ճաշակի ձեւավորմանը: Ինտերնետով ֆիլմը նայելուց հետո այլեւս կինոսրահ չեն գնա», եզրափակեց երիտասարդ խոսունակալից ռեժիսորը:

Վահան Խաչատրյանի «Սուրբ Խաչն առանց խաչի» 60-րոպեանոց ֆիլմում երիտասարդ ռեժիսորը արծարծել է մի հարց, որն անտարբեր չի կարող թողնել որեւէ մեկին: Ֆիլմը նկարվել է անցած տարի Արեւմտյան Հայաստանում, Աղթամար եկեղեցում պատարագ մատուցելու հարցի շուրջը բարձրացած տարակարծությունները հստակեցնելու համար: «Ես փորձել եմ ֆիլմով ներկայացնել հայոց երազանքի, խաբված հույզերի, այսօրվա Թուրքիայի իրական դեմքը եւ մեր մշտական հույզերը»: «Ազգի» այն հարցին, թե ինչպես մտահղացավ հենց այդ թեմայով ֆիլմ նկարել, նա ասաց. «Ամեն մի հայ մոր կաթի հետ սնվում է այն հայրենասիրությամբ, որը հետագայում, գիտակից կյանքում դառնում է նպատակ, ձգտում եւ արդարության վերականգնում: Ֆիլմում խաչը տեղադրվում է, դա պարզապես խաչ է-երկաթի կտոր չի, իսկ իսկական խաչը իմ սրտում է: Ո՞վ է այդ խաչի տերն այսօր, այ սա է իմ ասելիքը, չկա պահապանը այդ խաչի: Հենց այդ ֆիլմով ես ցանկացել եմ տեսնել, թե որտեղ է իմ անցյալը, որտեղ է ապագան եւ ինչ կարող ենք մենք անել այսօր մեր պատմական վայրերում»:

Երիտասարդ ռեժիսորը այժմ աշխատում է «Ձավախք՝ խորթ զավակ» ֆիլմի վրա, ու կրկին անդրադառնում մեր պատմական բռնագրավված տարածքներին, ու նրանց հետ կապված խնդիրներին:

ՄԱՔԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Խաղարկային մրցույթում ներկայացված էր Օլիվյե Կուսմակի «Ցավի զավակը» ֆիլմը

Օլիվյե Կուսմակին Միխայել Սամբոլցյանը ներկայացնելով ասաց. «Փառատոնին ներկայացված «Ցավի զավակը» ֆիլմը շատ հետաքրքրական է որպես միաժամանակ ֆրանսիական կինոյի շարունակություն եւ որպես ինչ-որ մի նոր հայացք»: Ֆիլմը 15-ամյա Սելինի մասին է, որը ցանկացել է վրեժ լուծել այն դասավորից, որը բանտարկության դատավճիռ է կայացրել իր մոր նկատմամբ: Աղջնակը մտնելով դասավորի տուն, շահելով ամուսինների վստահությունը, խաբում է, որ անչափահաս է: Եվ մի օր, հարմար պահի գայթակղում է նրան, որպեսզի թակարդը գցի դասավորին: Ինչպես ասում էր Օլիվյե Կուսմակը, դա իր կողմից հորինված պատմություն է եւ այդ թեման միշտ էլ առկա է:

Մարդկանց ու երեւույթների մասին պատմող 90 րոպե տեւողությամբ ֆիլմում ռեժիսորը ներկայացրել է բարու եւ չարի առկայությունը միաժամանակ: «Ես կարծում եմ, որ մարդիկ ավելի շատ ոչ բարու եւ ոչ էլ չարի մեջ են, այլ գտնվում են գորշ մի տարածքում, որտեղ ամեն մեկը պայքարում է իր ներքին դեւերի դեմ: Հենց այդ պայքարի ու «բարուց» չարին կերպարանափոխումն է, որ ցանկացել եմ ներկայացնել դատավորի կերպարով, որը մարդկային ճակատագրերի հետ է խաղում, միաժամանակ բարի մարդու համբավ վայելում: Մենք ապրում ենք մեր աշխարհում, որտեղ անընդհատ մանիպուլյացիայի ենթարկվում եւ հեռուստատեսության, եւ թատրոնի, եւ գովազդների եւ անգամ քաղաքական գործիչների կողմից ու այդ երեւույթը դարձել է իմ ֆիլմի ասելիքներից կարեւորը», ասում էր Օլիվյե Կուսմակը: Իսկ այն հարցին ռեժիսորներ էլ են մանիպուլյացիայի ենթարկում դերասաններին, Օլիվյե Կուսմակը ասաց. «Գուցե: Բայց նպատակին հասնելու համար նրանք էլ են գնում այդ քայլին, ինչպես մեզանից յուրաքանչյուրը»:

«Ազգի» հարցին պատասխանելով ռեժիսորն ասաց. «Կինոն ինձ համար անարդարության դեմ պայքարի միջոց է: 19 տարեկանում որոշեցի կինոյով զբաղվել, քանի որ այն աշխարհը, ուր ապրում էի, ինձ դուր չէր գալիս: Իսկ ֆիլմ նկարելով ես այդ բոլոր վատ կողմերի վրա երաժշտություն կդնեմ ու կյանքը կգեղեցկացնեմ: Կյանքի ու իմ մոտեցումների միջեւ դեռ մելամաղձություն է մնացել, որն էլ փորձել եմ ֆիլմի միջոցով կիսել ձեզ հետ»:

Ֆրանսիական այսօրվա կինոյի մասին ռեժիսորը դժվարացավ կարճիք ասել. «Այսօր Ֆրանսիայում մի քանի հաջողված նոր ֆիլմեր կան: Ես հավատում եմ, որ երիտասարդները օգտագործելով ժամանակակից հնարավորությունները կարող են լավ ֆիլմեր նկարել», ասաց Օլիվյե Կուսմակը:

Մ. Մ.

«Մուսանյան նոթեր» ֆիլմը խաղարկային մրցույթին

Հարավային Կորեայից չին ռեժիսոր Փարկ Չուն-բումին Միխայել Սամբոլցյանը ներկայացրեց եւ տեղեկացրեց, որ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հյուրը երկու անգամ եղել է Չուն-բումի ուսուցիչը՝ Լի Չան-դոն, որի վերջին «Պոեզիա» ֆիլմի նկարահանումների ժամանակ Փարկը աշխատել է որպես ռեժիսորի օգնական: Եվ հենց ուսուցիչն է հուշել Փարկին, որպեսզի նա իր կարճամետրաժ վավերագրական ֆիլմը դարձնի մեծ, խաղարկային ֆիլմ: «Մուսանյան նոթեր» 127 րոպ. ֆիլմի սցենարը Փարկը գրել է իր համալսարանական ընկերոջ մասին, որ Հյուսիսային Կորեայից գաղթելով գնացել է Հարավային Կորեա, քանի որ հոգնել է անգործությունից, սովից, հույս ունենալով, որ կերջանկանա: Սակայն նրա կյանքը այս նոր վայրում չի տարբերվում նախկինից ու երիտասարդն իր տեղը չի գտնում տիրող կապիտալիստական հասարակության մեջ, որի պայմաններում նույնիսկ ավելի դժվար է գլուխը պահել: Ֆիլմը փախստականների վիճակի ու դժվարությունների մասին է, որով վերենք հանվում բոլոր այն բացասական կողմերը Հարավային Կորեայում ապրող փախստականների կյանքի վերաբերյալ: «Այսօր Հարավային Կորեայում 3 միլիոն փախստականներ կան, որոնք աշխատանք փնտրելու համար են գալիս եւ նրանց ներկայությունը ճզմում է մեզ», եզրափակեց իր խոսքը սպորտում մեծ հաջողությունների հասած, սակայն ֆիլմեր նկարելու երազանքը իրականություն դարձած չին ռեժիսոր եւ սցենարիստ Փարկ Չուն-բումը:

Մ. Մ.

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

«Հակոբ Գյուրջյան» քանդակի առաջին միջազգային սիմպոզիում Շուշիում

Հուլիսի 15-29-ը Շուշիում կանցկացվի «Հակոբ Գյուրջյան» քանդակի առաջին միջազգային սիմպոզիումը՝ ի հիշատակ շուշեցի մեծանուն քանդակագործի: Սիմպոզիումը անց է կացվում ՀՀ Մշակույթի նախարարության, Երեւանի քաղաքապետարանի հովանավորությամբ, Արցախի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի ու Շուշիի քաղաքապետարանի աջակցությամբ եւ «Նարեկացի» արվեստի միության անմիջական մասնակցությամբ: Այսօրինակ հավաք Արցախի Հանրապետությունում անցկացվում է առաջին անգամ: Անդրանիկ այս հավաքին մասնակցում են Ֆլորենցիայի պետական համալսարանի պրոֆեսորներ Կարոլինա Զովանելլին, Մադդալենա Զովանելլին, Լուիզա Մորոնին, քանդակագործներ, նկարիչներ (թվով 22): Սիմպոզիումին պատվավոր հյուրի կարգավիճակով կմասնակցի Հռոմի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, պրոֆեսոր Զեռարդո Լո Ռուսսոն:

Նախաձեռնության գաղափարը ծնվել է դեռեւս 2009 թ., երբ ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ ու հրավերով Ֆլորենցիայում բնակվող հայասանցի քանդակագործ Վիգեն Ավետիսի հետ Հայաստան էր այցելել իտալացի անվանի արվեստաբան Ֆրանչեսկո Գալլոն՝ մասնակցելու Մինաս Ավետիսյանի ստեղծագործությունների ազգակերպվելիք հոբելյանական ցուցահանդեսին:

Հավաքի առանցքը՝ ի թիվս դասախոսություններով, վարպետության դասերով, ցուցահանդեսներով եւ կինոդիտումներով հագեցած ժամանակացույցի, քանդակների ստեղծումն է, որի արդյունքում մասնակից 15 արվեստագետներից յուրաքանչյուրը ազատ թեմայով կկերտի իր քանդակը շուշվա կրաքարից՝ այն նվիրելով քաղաքին: Նյութի ընտրությունը խորհրդանշական է այն առումով, որ հենց այդ քարից է կառուցված Շուշիի Սբ. Ղազանչեցոց եկեղեցին:

Գաղափարի հեղինակ մաեստրո Վիգեն Ավետիսի բնորոշմամբ. «15 քանդակ ամեն տարի եւ 10 տարի անց Շուշին կզարդարի արվեստի 150 աշխատանք՝ այն վերածելով իրական թանգարանի բաց երկնքի տակ»:

Որպես ամենամյա նախաձեռնության անդրանիկ հավաք, սիմպոզիումը կոչված է քանդակագործների համար դառնալու համագործակցության, մշակութային ու մասնագիտական երկխոսության, ստեղծագործական ոգեշնչման հարթակ: Այն նաեւ կոչված է նպաստելու Արցախի միջազգային հեղինակության բարձրացմանը արվեստի միջոցով, վերականգնելու արվեստների կենտրոն Շուշիի նախկին համբավն ու կարգավիճակը, խթանելու հետպատերազմական Շուշիի ճարտարապետական ու քաղաքաշինական վերելքն ու զարգացումը:

Սիմպոզիումի արդյունքները կամփոփվեն հայերեն, իտալերեն, անգլերեն լեզուներով ծավալուն կատալոգում՝ արվեստի անվանի քննադատ Ֆրանչեսկո Գալլոյի հեղինակությամբ (նա ՀՀ մշակույթի նախարարության հրավերով Հայաստան է այցելում արդեն երրորդ անգամ):

Ստեղծագործական ողջ ընթացքը կվավերացվի իտալական (Studio Quagli) «Ստուդիո կալիի» կողմից ստեղծվող վավերագրական ֆիլմում, որտեղ նաեւ անդրադարձ կլինի Հայաստանի, Արցախի ու Արեւմտյան Հայաստանի պատմությանն ու մշակութային ժառանգությանը: Ըստ արդեն ստեղծված նախնական պայմանավորվածության՝ ֆիլմը ցուցադրվելու է իտալական «Ռայ 1» (Rai 1) հեռուստատեսությամբ:

Մ. Մ.

Իսկ ինչո՞ւ ոչ «ճաշտակ»

Անչափ ուրախացա, երբ իմացա, որ մեր միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերում տեղ է գտնելու նոր առարկա՝ «շախմատ»: Սա, կասկածից վեր, արտասովոր իրադարձություն է մեր կրթական ասպարեզում: Շախմատային պարապմունքները, ինչ խոսք, կօգնեն երեխաներին ճիշտ տրամաբանել, անսխալ կանխագուշակել կատարված քայլին հաջորդող իրադարձությունները, ձեռք բերել չափազանց օգտակար այնպիսի մտավոր ունակություններ, ինչը նրանց կօգնի հետագայում անսխալ կողմնորոշվել հասարակական եւ անձնական կյանքի բարդ խաչմերուկներում:

Ուրախացա, բայց եւ անհանգիստ պահեր ապրեցի: Նախ ո՞ւմ են վստահելու իմաստուն խաղի նրբությունները երեխաներին ուսուցանելու չափազանց կարեւոր գործը: Դասատարակները, հասկանալի է, պետք է լինեն ոչ միայն հմուտ գիտակներ, այլեւ հոգեբան մանկավարժներ: Ու եւս մեկ բան, որ ոչ պակաս կարեւոր է: Իսկ ինչո՞ւ՝ «շախմատ»: Չէ՞ որ սա զուտ ռուսական տերմին է, չէ՞ որ վաղուց, իսկ սփյուռքում այսօր էլ հաջողությամբ գործածում են մեզ շատ ավելի հոգեհարազատ «ճաշտակ» բառը (ի դեպ, մեր հարեւան վրացիներն էլ մշտապես նախապատվությունը տվել են ճաշտակին): Հիմա պատկերացնենք մի վեցերորդ դասարանցու, ով սկսել է յուրացնել «շախմատ» առարկան եւ հանկարծ հայերեն շարահյուսության ժամանակ էլ, դիցուք, գրի՝ «Շախ Աբասը զորք հավաքեց...»: Պարզ չէ, որ այդ աշակերտին զարմացած ուսուցիչը անպայման կնախատի կոպիտ սխալ թույլ տալու համար եւ կդնի ցածր գնահատական...

Մենք առանցքային շատ հարցերում վճիռներ կայացնելիս՝ ուշանում ենք, չգիտես ինչու ուշանում ենք նաեւ օտար բառերից հրաժարվելու հարցում: Եվ ցավալին միայն այդ չէ՝ մեր փուչիկ, ահավոր ձանձրալի ֆիլմաշարերի լեզուն ողողված է ռուսական կարծրացած մտածելակերպի վառ դրսեւորումներով, որ բնավ խորթ ու անընդունելի են մեր մայրենիի համար: Ոչ, խոսքը բազարային վաբշեդակայների մասին չէ, թեեւ պարզ է, սա նույնպես զգալի, անհեթեթ երեւույթ է: Ցանկանում եմ թվարկել ընդամենը մի քանի «գլուխգործոցներ», որ, դա բնավ էլ դժվար չէ հասկանալ, մեր նորահայտ սցենարիստ-ռեժիսորների (նրանց ազգանունները պարզապես անհնար է կարդալ էկրանին, քանի որ, սա միտումնավոր, նախանձելի արագությամբ են հաջորդում միմյանց), ինչու չէ, ավաղ, նաեւ առանձին դերասանների բոլորովին էլ ոչ թե ստեղծագործական մտքի թռիչքի արգասիք են, այլ սոսկ ռուսերենից կատարված բառացի, արհեստական թարգմանություններ, ուստի եւ ունայնամիտ են, միանգամայն մերժելի՝ «ինչ հետ ամեն ինչ նորմա՞լ է», «դասարկ ձեռքերով հյուր գնո՞ւմ են», «ինչից վերցրիր, որ ես եմ մեղավոր», «ինչ պետք է շատ ուտել, «ես ինձ մոտ եմ», «դուրս է գալիս, նա քաղաքից դուրս է եկել»: Սրան կարելի է ավելացնել գրեթե ամեն օր ականջ սղոցող «խնդիրը (հարցը, բանը) կայանում է նրանում, «խոսքը գնում է»... դարձյալ փոխառյալ արտահայտություններ, ինչու չէ, նաեւ զարմանք հայտնել այն առթիվ, թե ինչու մինչեւ հիմա ասում ենք Տեխաս եւ ոչ թե Տեքսա, Մեխիկո եւ ոչ՝ Մեքսիկա, Դիսնեյ եւ ոչ՝ Դիսնի (վերջին զուտ ռուսական անվանումներ): Եթե դիմենք բուն ազգային անվանումներին, եւ եթե այն սկզբունքները փոփոխման ենթակա չեն, այդ դեպքում ասենք տախի եւ ոչ՝ տախի, խերոխ եւ ոչ՝ խերոխ...

Մեծն Ալբերտ Էյնշտայնը (ոչ Էյնշտեյնը, այնպես, ինչպես՝ գրոսմայստեր եւ ոչ՝ գրոսմեյստեր) մի առիթով ասել է. «Աշխարհում գոյություն ունի երկու անվերջ բան՝ դա տիեզերքն է ու հիմարությունը: Թեպետ տիեզերքի պարագայում ես որոշակի կասկածներ ունեմ»: Սա ընդգծելով, հանճարեղ գիտնականը, հավանաբար, նկատի է ունեցել նաեւ օտարամոլ տեխնիկ-բառակազմողներին:

ՄԻՍԱԼ ՆԱԶԱՐՅԱՆ

Հայ շախմատիստները հաղթողի հավակնորդների թվում են

Վաղը Չինաստանի Նինբո քաղաքում մեկնարկում է շախմատի աշխարհի թիմային 8-րդ առաջնությունը, որի 10 մասնակիցների թվում է նաեւ Հայաստանի հավաքականը: Մեր ընտրանին մասնակցել է աշխարհի թիմային վերջին 4 առաջնություններին եւ երեքում (1997-ին՝ Լյուցեռնում, 2001-ին՝ Երեւանում, 2005-ին՝ Բեեր Շեւայում) դարձել է բրոնզե մրցանակակիր: Իսկ ահա անցյալ տարի Թուրքիայի Բուրսա քաղաքում կայացած շախմատի աշխարհի թիմային 7-րդ առաջնությունում մեր հավաքականը մնաց առանց պարգեւների՝ գրավելով 5-րդ տեղը: Մեր հավաքականի կազմում հանդես էին գալիս Լեւոն Արոնյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը, Արման Փաշիկյանը, Տիգրան Պետրոսյանն ու Տիգրան Քոչանջյանը:

ՖՈՏՈԼՈՒՐ

Նինբոյում Հայաստանի հավաքականը, որի անփոփոխ մարզիչն է Արշակ Պետրոսյանը, հանդես կգա հետեւյալ կազմով. Լեւոն Արոնյան (2805), Սերգեյ Մովսիսյան (2700), Վլադիմիր Հակոբյան (2667), Գաբրիել Սարգսյան (2663), Ռոբերտ Հովհաննիսյան (2556): Հավաքականի կազմում առաջին անգամ է հանդես գալու Սերգեյ Մովսիսյանը, որն այս տարվանից ներկայացնում է Հայաստանը: Թիմի պահեստային խաղացողը հանրապետության այս տարվա չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանն է:

Մասնագետներից շատերի կարծիքով չեմպիոնի տիտղոսի համար հիմնական պայքարը կընթանա աշխարհի թիմային նախորդ առաջնության հաղթող Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի հավաքականների միջեւ:

Ռուսաստանի հավաքականը բավականին ուժեղ կազմ ունի: Թիմի միջին վարկանիշը (2752) ամենաբարձրն է մասնակից 10 հավաքականների մեջ: Ըստ խաղատախտակների ՌԴ հավաքականի կազմում հանդես կգան Ալեքսանդր Գրիշչուկը (2746), Սերգեյ Կարյակինը (2788), Յան Նեպոմնյաչնին (2711), Պյոտր Սվիդլերը (2739) եւ Նիկիտա Վիտյուգովը (2733):

Միջին վարկանիշով 2-րդը Ադրբեջանի թիմն է (2737), որում ընդգրկված են Վուգար Հաճիմովը (2760), Գադիր Հուսեյնովը (2625), Ռաուֆ Մամեդովը (2679), Շահրիյար Մամեդյարովը (2765) եւ Թեյմուր Ռաջաբովը (2744): Հարկ է նշել, որ մինչեւ վերջին պահը թիմի մարզիչները գաղտնի են պահում, թե շախմատիստներից ով որ խաղատախտակի վրա է խաղալու:

Միջին վարկանիշով (2722) 3-րդ ցուցանիշն ունի Ուկրաինայի հավաքականը, որի կազմում են Զախար Եֆիմենկոն (2706), Պավել Էլյանովը (2697), Վասիլի Իվանչուկը (2768), Ալեքսանդր Մոիսեենկոն (2715) եւ Ալեքսանդր Արեշչենկոն (2682): Հայաստանի հավաքականը միջին վարկանիշով (2709) 4-րդն է:

Ինչ վերաբերում է շախմատիստների անհատական վարկանիշներին, ապա մասնակիցների ցուցակը գլխավորում է Լեւոն Արոնյանը (2805), որին հաջորդում են Սերգեյ Կարյակինը (2788), Վասիլի Իվանչուկը (2768), Շահրիյար Մամեդյարովը (2765):

Հայաստանը կներկայացնեն 22 մարզիկներ

Թուրքիայի Տրապիզոն քաղաքում հուլիսի 23-30-ը կանցկացվի Եվրոպայի երիտասարդական օլիմպիական ամառային 11-րդ փառատոնը: Միջոցառման անցկացման գաղափարը պատկանում է ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեին: Ավանդաբար այդ սուգաստեսին մասնակցում են նաեւ հայաստանցի մարզիկները:

Այս անգամ աշխարհամասի 49 երկրների օլիմպիական կոմիտեներ իրենց պատվիրակությունները կգործուղեն մրցավայր: Ծրագրում ընդգրկված է 9 մարզաձեւ: Երիտասարդական սպորտի այդ գլխավոր մարզահանդեսին կմասնակցեն շուրջ 4000 մարզիկ-մարզուհիներ: Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի լրատվության պատասխանատու Նաթելլա Հովասափյանից, մեր երկրի դրոշի ներքո հանդես կգան 22 ներկայացուցիչներ. ձյուդոյիստներ՝ Վահագն Հովսեփյան (50 կգ), Լեւոն Ավետիքյան (55 կգ), Արսեն Ղազարյան (60 կգ), Ալբերտ Մկրտչյան (66 կգ), Լեւոն Կարապետյան (73 կգ), Նարեկ Բալոյան (81 կգ), սպորտային մարմնամարզիկներ՝ Արմեն Պետրոսյան, Արամ Մովսիսյան, Կարեն Քոչարյան, Անահիտ Թադեւոսյան, թենիսիստներ՝ Սուրեն Բաղդասարյան, Կարինե Թության, լողորդներ՝ Դավիթ Հունանյան (100մ եւ 200մ թիկնալող), Վահան Մխիթարյան (50մ եւ 200մ ազատ ոճ), Հասմիկ Հակոբյան (50մ ազատ ոճ), թեթեւատլետներ՝ Լեւոն Աղասյան (հեռացատկ, եռացատկ), Սամվել Գրիգորյան (400մ, 400մ արգելավազք), Դիանա Խուբեսերյան (100մ եւ 400մ), Սաթենիկ Հովհաննիսյան (հեռացատկ, եռացատկ) եւ հեծանվորդներ Հովհաննես Հովհաննիսյան, Ժորա Գրիգորյան, Սարիբեկ Ավետիսյան:

Հայաստանի պատվիրակությունը (գլխավոր հանձնակատար՝ Գագիկ Բոլշիկյան) մրցավայր կմեկնի հուլիսի 22-ին եւ հայրենիք կվերադառնա հուլիսի 31-ին: Մեր թիմը հանդես կգա Իսպանիայի «Կելմե» ֆիրմայի մարզահագուստով:

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն նախագահ Գագիկ Ծառուկյանի գլխավորությամբ հոգացել է նախապատրաստական եւ ուսումնամարզական բոլոր աշխատանքների մասին: Հույս ունենք, որ մեր թիմը լավ մրցելույթներ կունենան եւ կարդարացնեն սպասելիքները:

Առջեւում քառորդ եզրափակիչ մրցախաղերն են

Ֆուտբոլի Ամերիկայի գավաթի խաղարկությունում ավարտվեց նախնական փուլը: Հայտնի դարձան քառորդ եզրափակիչի բոլոր մասնակիցները: Վերջինը մրցավեճն ավարտեցին B խմբում հանդես եկող հավաքականները, որոնցից 3-ը՝ Բրազիլիան, Վենեսուելան եւ Պարագվայը կշարունակեն պայքարը պատվավոր մրցանակի համար:

Աշխարհի հնգակի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը 2 անընդմեջ ոչ-ոքիներից հետո վերջապես անդրանիկ հաղթանակը տոնեց: Բրազիլացիները 4-2 հաշվով պարտության մատնեցին Էկվադորի ընտրանուն: Առաջին խաղակեսում կողմերը մեկական գնդակ փոխանակեցին: Բրազիլացիներից հաշիվը բացեց Պատոն, որին էկվադորցիները պատասխանեցին Կայսեդոյի գոլով: 2-րդ խաղակեսի սկզբում աչքի ընկավ բրազիլական ֆուտբոլի «ծագող աստղ» Նեյմարը, սակայն շուտով Կայսեդոն իր 2-րդ գնդակը խփելով, կրկին վերականգնեց հավասարակշռությունը: Բայց հետագայում բրազիլացիներ Պատոն ու Նեյմարն իրենց 2-րդ գոլերը խփեցին եւ ապահովեցին թիմի հաղթանակը: Բրազիլիայի հավաքականը 5 միավորով դարձավ B խմբի հաղթող՝ գնդակների ավելի լավ տարբերության շնորհիվ գերազանցելով նույնքիսի արդյունք ունեցող Վենեսուելայի ընտրանուն: Քառորդ եզրափակիչում Բրազիլիայի հավաքականը կմրցի Պարագվայի ընտրանու հետ: Նախնական փուլում այս թիմերի միջեւ կայացած մրցավեճում գրանցվել է ոչ-ոքի՝ 2-2:

Դրամատիկ պայքարում անցավ Վենեսուելայի եւ Պարագվայի հավաքականների մրցավեճը: Այդ խաղում հաղթողը կգրավեր 2-րդ տեղը: Ճիշտ է, Վենեսուելայի հավաքականին ոչ-ոքին էլ բավարարում էր 2-րդ տեղը զբաղեցնելու համար, իսկ ահա պարագվայցիները պայքարը շարունակելու համար նվազագույնը չպետք է պարտվեին: Եվ նրանց հաջողվեց կատարել իրենց առջեւ ծառացած խնդիրը: Արդեն 4-րդ րոպեին Ռոնդոն առաջ մղեց Վենեսուելայի հավաքականին: Հետագայում պարագվայցիները Ալկարացի, Բարիոսի եւ Ռիվերոսի շնորհիվ հաշիվը դարձրին 3-1 եւ մոտ էին հաղթանակին: Բայց խաղավերջում Վենեսուելայի ֆուտբոլիստներն իսկական հրաշք գործեցին: 89-րդ րոպեին Ֆեդորը կրճատեց հաշիվը, իսկ ավելացված ժամանակում Պերոսոն Վենեսուելայի հավաքականին փրկեց պարտությունից: Գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 3-3, որը ձեռնտու էր 2 հավաքականներին էլ:

Քառորդ եզրափակիչ մյուս մրցախաղերում կհանդիպեն հետեւյալ զույգերը. Կոլումբիա-Պերու, Արգենտինա-Ուրուգվայ, Չիլի-Վենեսուելա: Առաջին հանդիպումը կկայանա հուլիսի 16-ին: Այդ օրը մրցավեճի կբռնվեն Կոլումբիայի եւ Պերուի հավաքականները:

ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱ

«Միկան» ունակ է ռեւանշի հասնելու

PHOTOLURE

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման 2-րդ փուլի առաջին խաղում «Միկան» Օսլոյում 0-1 հաշվով պարտվեց նորվեգական «Վոլերենգային»: Հանդիպման ելքը վճռեց 68-րդ րոպեին Մորթեն Բերեի խփած միակ գնդակը: Այս անգամ էլ ավանդույթը չխախտվեց: «Միկան» 10-րդ անգամ մեկնարկի դուրս եկավ եւ 9-րդ անգամ մրցաշարը սկսեց պարտությամբ: Սովորաբար «Միկան» ավելի հաջող է խաղում պատասխան հանդիպումներում: Ինչ խոսք, 1 գնդակի տարբերությունը վերացնելը «Միկայի» համար չպետք է դժվարին խնդիր լինի, թեեւ եղել են մրցաշարեր, որոնցում դա թիմին չի հաջողվել: Մասնավորապես անցյալ տարի Եվրոպայի լիգայի մրցաշարի առաջին խաղում 0-1 հաշվով զիջելով մակեդոնական «Ռաբոտնիչկիին», «Միկան» սեփական հարկի տակ չկարողացավ ռեւանշի հասնել: Գրանցվեց գոլազուրկ ոչ-ոքի: Ամեն դեպքում հուլիսի 21-ին Երեւանում կայանալիք պատասխան խաղում «Միկան» պետք է ձգտի դրական արդյունքի հասնել ու հաջորդ փուլի ուղեգիր նվաճել:

Նախորդ փուլում «Ուլիսի» մրցակից հունգարական «Ֆերենցվարոշը» սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց նորվեգական «Օլեսունին»: Իսկ «Բանանցին» ուղեգրից զրկած Ռուսթավիի «Մեսալուրգը» ոչ-ոքի (1-1) խաղաց Ղազախստանի «Իրտիշի» հետ: Ադրբեջանական «Ղարաբաղը» հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) խաղաց Ֆարերների «Սրեյմուրի» հետ, ընդ որում դաշտի տերերը պարտությունից խուսափեցին ավելացված ժամանակում:

Ներկայացնում ենք նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մյուս թիմերի մասնակցությամբ հանդիպումների արդյունքները. «Շախտյոր» (Ղազախստան)-«Սենտ Պատրիկս» (Իռլանդիա)՝ 2-1, «Տաուրաս» (Լիտվա)-«Դեն Հագ» (Հոլանդիա)՝ 2-3, «Մինսկ» (Բելառուս)-«Գազիանտենսպոր» (Թուրքիա)՝ 1-1, «Անորտսիս» (Կիպրոս)-«Գագրա» (Վրաստան)՝ 3-0, «Դիֆերդանժ» (Լյուքսեմբուրգ)-«Լեւադիա» (Էստոնիա)՝ 0-0, «Ժելեզնիչար» (Բոսնիա)-«Շերիֆ» (Մոլդովա)՝ 1-0, «Մետալուրգ»՝ (Լատվիա)-«Զալցբուրգ» (Ավստրիա)՝ 1-4, «Գլենտորան» (Հս. Իռլանդիա)- «Վորսկլա» (Ուկրաինա)՝ 0-2, «Լլանելի» (Ուելս)-«Դինամո» (Թբ., Վրաստան)՝ 2-1:

Մրցաշարում եռիշխանություն է

Իսպանիայի Բենասկ քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 8-րդ տուրում Տիգրան Պետրոսյանը 2-րդ անընդմեջ մրցախաղում պարտիան ավարտեց ոչ-ոքի: Նրա մրցակիցը չեխ Իրժի Ստոչեկն էր: Կես միավորի կորուստը հնարավորություն ընձեռեց Գեորգի Տիմոշենկոյին եւ Ալեքսանդր Դելչեւին միավորներով հավասարվելու Պետրոսյանին եւ նրա հետ 7 միավորով գլխավորելու առաջնությունը: Դելչեւը հաղթեց Միխայլո Օլեխիենկոյին, իսկ Տիմոշենկոն պարտության մատնեց Դենիս Կադրիսին:

Տուրը հաղթական էր Զավեն Անդրեասյանի համար, որը սպիտակներով պարտության մատնեց Յացեկ Ստոպային: Այդ հաղթանակի շնորհիվ Զավենը վաստակեց 6,5 միավոր եւ ընդհուպ մոտեցավ առաջատար եռյակին: Իսկ ահա Կարեն Մովսիսյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց: Նա զիջեց Ալդարո Ռիոբոյին: Կարենը 5,5 միավորով ընթանում է 42-րդ տեղում:

Միեր Հովհաննիսյանը Բելգիայի եռակի չեմպիոն

Բելգիայում բնակվող միջազգային վարպետ Միեր Հովհաննիսյանը գերազանց հանդես եկավ այդ երկրի առաջնությունում՝ 3-րդ անգամ նվաճելով չեմպիոնի տիտղոսը: Հայ շախմատիստը 9 հնարավորից վաստակեց 7 միավոր՝ մեկ միավորով առաջ անցնելով բելգիացի միջազգային վարպետ Բարս Միխելսից:

Միերը տոնեց 5 հաղթանակ՝ պարտության մատնելով Ստեֆան Հաութոթին, Ռուդոլֆ Մեսենին, Թիբաութ Վանդենբուշին, Գերտ վան դեր Սթրիչին եւ Վադիմ Մալախատկոյին: Մնացած 4 պարտիաներում Հովհաննիսյանը հաշտություն կնքեց Ստեֆան Բեյկեմայի, Բարս Միխելսի, Ալեքսանդր Ջեբուաձեի եւ Պետար Պոպովիչի հետ:

Կրկին ոչ-ոքի

Հունաստանում ընթացող շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Տիգրան Սիմոնյանը հաշտություն կնքեց Պալ Ռոյսեթի հետ: Հայ շախմատիստը 3,5 միավորով 28-րդ տեղում է: Մրցաշարում հիանալի է հանդես գալիս ուկրաինացի գրոսմայստեր Յուրի Կրիվորուչկոն, որը 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Անդրեյ Ռիչագովին: 4,5-ական միավորով նրան հետաքրքրում են Խրիստոս Բանիկասը, Դմիտրի Սվետուշկինը եւ Նիկիտա Մայորովը:

Շահինյանն ու Քալաշյանն առաջատարների թվում են

Շախմատի Նանա Ալեքսանդրիայի գավաթի խաղարկությունում կայացան 4-րդ տուրի հանդիպումները: Բաց մրցաշարում հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Դավիթ Շահինյանն ու Դավիթ Քալաշյանը, որոնք 8 շախմատիստների հետ 3,5-ական միավորով գլխավորում են աղյուսակը: Շահինյանն առաջին կես միավորը կորցրեց՝ հաշտություն կնքելով Դավիթ Զարկուայի հետ, իսկ Քալաշյանը պարտության մատնեց Արման Միհայելյանին:

Մինչեւ 12 տարեկան աղջիկների մրցավեճում Անի Իվանյանը 2 միավորով 9-րդ տեղում է: Անին 4-րդ տուրում անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Նատա Ջիբուտիին: Տարիքային այդ խմբի տղաների մրցավեճում լավագույնը Միեր Եսայանի արդյունքն է, որն ունի 2,5 միավոր: Եսայանը նույնպես անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Գեորգի Բոսկովելիին:

Մինչեւ 10 տարեկան պատանիների մրցավեճում նոր հաղթանակ տոնեց Գոռ Թադեւոսյանը՝ առավելության հասնելով Նիկոլոզ Խաղավայի նկատմամբ: Գոռը վաստակել է 3 միավոր եւ ընթանում է 9-րդ տեղում: Առաջատարը 4 միավոր ունեցող Կոկա Բուկիան է: Աղջիկների մրցաշարում 2,5-ական միավոր են վաստակել Մարիամ Բաբայանն ու Սուսաննա Հարությունյանը: Ամենակրտսեր տարիքային խմբի տղաների մրցաշարում հայերից լավագույնը Արարատ Մուրադյանի արդյունքն է (3 միավոր): Աղջիկների մրցավեճում Անահիտ Մկրտչյանն ու Մանե Հովհաննիսյանը վաստակել են 3-ական միավոր:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ծոլարշավ

Հայտնագործեցին այն, ինչը շաս վաղուց էր հայտնագործված

Կոլոմբո: Ավելի ճիշտ՝ նավահանգիստ Կոլոմբո: Շրի Լանկայի ոչ պաշտոնական կամ փասացի մայրաքաղաքը, կամ էլ՝ նախագահի եւ կառավարության նստավայրը: Որովհետեւ կա նաեւ պաշտոնական մայրաքաղաք՝ Շրի Ջայավարդենապուրա Կոտտե երկար անունով, որտեղ նախագահի եւ վարչապետի աչքից հեռու իրենց գործն են անում պառլամենտը եւ գերագույն դատարանը: Պարզվում է, պետությունն այդպես էլ կարող է նորմալ գոյություն ունենալ: Այդ թեմային կվերադառնամ: Իսկ առայժմ՝ մեր նավային խնդիրների մասին: Ես արդեն պատմել եմ Սուրաբայա-Սինգապուր-Շրի Լանկա հասվածում մեր ստացած վերքերի մասին, եւ որ մեկ-երկու օրում կկարողանանք ահռելի նավահանգստում ապաքինվել մեկը չէր կարողանում հասկանալ: Իսկ Լուիզ Սիմոնը (80-90-ական թվականներին հայկական բարեգործական միության նախագահը) նույնիսկ նախանձում էր ինձ: Նյու Յորքի իր բնակարանը նորոգելուց հետո որոշել էր սառնարան գնել ու մի ամբողջ շաբաթ տանջվել էր խանութից-խանութ գնալով: Դժվարանում էր ընտրել ավելի քան հարյուր տեսակի, գույնի ու ձեւի մեջ: Եվ ահա, մահու չափ հոգնած, արտահայտվեց. «Ավելի լավ չէ՞ ձեր սոցիալիզմի պայմաններում, որտեղ ոչ միայն գնելու, այլեւ ընտրելու բան չկա»:

Մեր առագաստանավում նման հարցերը լուծվում են, ինչպես հիմա ընդունված է ասել, ինտերնետի միջոցով: Դա արդեն Արիկի ոլորտն է, որը սկսած Նոր Զելանդիայից, օգնության համար դիմում է իր որդի Վախթանգին: Մեր նավում ինտերնետը շաս դանդաղ է աշխատում: Ճիշտ է, Վախթանգն ապրում է Ավստրալիայում (որտեղ միայն չեն ապրում նրա որդիները): Վախթանգին միայն իմանալ է հարկավոր, թե ինչ մասին է խոսքը, երբ եւ որտեղ պետք է հասցնել: Մնացած ամեն ինչ նա անում է ճշգրիտ եւ մեզ համար առանց դժվարությունների: Ինչ վերաբերում է պոմպերին, պարզվում է, որ շուկայական կապիտալիզմի ժամանակ էլ կարող են խնդիրներ լինել: Այստեղ նույնիսկ Վախթանգը ոչինչ չկարողացավ անել: Ջափից դուրս սահմանափակված ենք ժամանակի հարցում: Բայց փոխարենը՝ մենք մի մեծագույն խնդիր ունենք, որը կարող ենք հանձնարարել միայն մեր Վախթանգին (նա արդեն մերն է): Դա կապված է ծովահենների հետ: Բայց այդ թեման՝ առաջիկա ռեպորտաժներում:

Իսկ առայժմ վերադառնանք երկրին, որտեղ գտնվում է «Արմենիա»-ն: Այստեղ հայեր չկան, թեեւ եղել են 17-18-րդ դարերում: Գլխավորապես նրանք էին, ովքեր հիմնավորվել էին Հնդկաստանում: Հույս ունենք գոնե մեկին գտնել: Չէ՞ որ նույնիսկ Ջասկի կղզում մենք իմացանք մի հայրենակցի մասին, բայց դա հեռանալու ժամին էր: Ցիսպրեցինք: Հիշում եմ, թե ինչպես Հռոդոս կղզում կառանվելուց բառացիորեն անմիջապես հետո ես ու Կարեն Դանիելյանը, առաջինն իջնելով ափ, մտանք փիչ հեռվում գտնվող ուղղափառ տաճար: Եվ այնտեղ էլ վաղ առավոտյան հանդիպեցինք երկու հայուհիների: Մայր ու դուստր էին՝ Գոհարը եւ Սվետլանան: Սվետլանայի հայրը՝ ազգությամբ հույն, զոհվել էր Կիրովականում, սեփական տանը 1988 թվականի դեկտեմբերի 7-ին:

Ըստ իս, Շրի Լանկան այսօր միակ երկիրն է, որի անվան մեջ նշվում է «սոցիալիստական» բառը: Ես անվան մասին եմ խոսում, ոչ թե էության: Շրի Լանկայի Դեմոկրատական Սոցիալիստական հանրապետություն: Տարածքով աշխարհում 119-րդն է: 65 հազար քառակուսի կիլոմետր: Բնակչության թվով 53-րդն է՝ 22 միլիոն: Քաղցրահամ ջրի խնդիր ունեն. խմելու ջրի մակերեսը երկու տոկոս էլ չի կազմում: 70 տոկոսը բուդդայականներ են, 15-ը՝ հինդուիստներ, 8-ը՝ քրիստոնյաներ, 7-ը՝ մահմեդականներ: Արդեն երկու տարի է, ինչ երկրում պարետային ժամ է մտցվել: Ճիշտ է, վերջին ժամանակներս ռեժիմը մի փիչ մեղմացրել են: Հակառակ դեպքում ընդհանրապես «Արմենիա»-ին չէին ընդունի Կոլոմբո նավահանգստում: Մեկ տարի առաջ այստեղ իրոք պատերազմ էր, որը, կարծում եմ, չի դադարում արդեն երկուսուկես հազար տարի: Համենայն դեպս, դեռեւս մեր թվարկությունից առաջ 504 թվականին հնդկական Վիջայա արքայազնը նվաճեց Շրի Լանկա կղզին (Ցինգալա) եւ երկար հարյուրամյակներ հնդիկները կառավարեցին երկիրը: Ամենուր ընդգծվում է, որ նրանք մեծ ներդրում ունեն եւ՛ մշակույթում ընդհանրապես, եւ՛ բուսամշակման, բրնձի մշակման մեջ՝ մասնավորապես:

Թող ընթերցողը բոլորովին չզարմանա, որ ես հանկարծ «Արմենիա»-ում սկսեցի հեռավոր կղզու պատմությունից խոսել, ասես «սեփական» թեմաներս փիչ էին: Ընդհանրապես ես ոչ մի բան հենց այնպես չեմ անում: Բազմիցս իմ գրառումներում անդրադարձել եմ աշխարհագրական այն հայտնագործություններին, որոնք երբեմն հիմարություն են ներկայացնում: Օրինակ բերեմ: Մինչ «Արմենիա»-ն կմտնենա Շրի Լանկային (Ցեյլոնին), ես արդեն ամբողջովին թաղված եմ կղզու պատմությանը վերաբերող նյութերի մեջ: Գիտեմ, որ երկիրը բազմիցս նվաճել են: Եվ ընդհանրապես, ավելի լավ կլիներ աշխարհի առաջ ոչ թե բացել ողջ Ամերիկան, Ավստրալիան, Պոլինեզիան, Օվկիանիան, այլ... փակել: Գուցե այն ժամանակ կդադարվեին եւ՛ տաղանդավոր ժողովուրդները, եւ՛ համաշխարհային ամենահին քաղաքակրթության գլուխգործոցները:

Ես մեծ քանակով պատմական նյութեր եմ հավաքել Ցեյլոնի մասին, մանավանդ այն շրջանի վերաբերյալ, երբ այն «հայտնագործեցին» եվրոպական բարբարոսները: Ահա համառոտ ողբերգական ժամանակագրություն. 16-րդ դարում կղզում սպանում եւ ավերածություններ էին գործում պորտուգալացիները, ապա նրանց փոխարինելու եկան հոլանդացիները, որոնք տաղանդավոր վարպետներ էին բաժանելու եւ տիրելու դժվարին ճամփորդությունից հայրենիք վերադարձավ Ցեյլոն կղզով: Գիտեմ եւ այն, որ հյուրանոցներից մեկում վերջերս, Ռուսաստանի Գողոների միության նախաձեռնությամբ, «Գազարդի» եւ Շրի Լանկայում Ռուսաստանի դեսպանության օգնությամբ հուշատեսակ է բացվել եւ տեղադրվել մեծ գրողի կիսանդրին, որն անտեսելը պարզապես մեղք է: Եվ ահա կապվեցի ինձ լավ հայտնի, խորհրդային եւ ռուսական դիվանագիտության լեգենդար վետերան, Հնդկաստանում Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Միխայլովիչ Գանակինի հետ: Խնդրեցի, որ ինձ կապի Շրի Լանկայում Ռուսաստանի դեսպանի հետ, որպեսզի վերջինս կազմակերպի «Արմենիա»-ի անձնակազմի հանդիպումը Անտոն Պավլովիչ Չեխովի հետ: Տասը րոպե անց ինձ զանգեց Շրի Լանկայում Ռուսաստանի գործերով դեսպանին փոխարինող հանձնակատար Եվգենի Նիկոլաեւիչ Սերգիենկոն եւ ասաց, որ ինքը կգա մեզ մոտ՝ նավ: Եվ կգա կնոջ՝ Սվետլանա Արտաշեսի Ատամանյան-Սերգիենկոյի հետ: Հենց այդպես: Գտնվեց այնուամենայնիվ հայուհի նաեւ Շրի Լանկայում: Եվ ես հիշեցի Հռոդոս կղզին:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Հնդկական օվկիանոս

բոլոր ցավերից: Բայց ո՞ւր էր թե: Հազար անգամ նորոգել են, ասենք, պոմպերը: Բայց հիմա նաեւ ողջ նավային սանտեխնիկան դրա կարիքն ունի: Ծովում սիրվված ենք եղել վարպետ դերձակների պես առագաստներ կարել ու կարկատել, ինչ-որ դեսալներ պատրաստել ինքնագնաց սարքի համար, կայմ ամրացնել: Ո՞ր մեկն ասես: Բայց այստեղ հանկարծ պարզում ենք, որ իսկայական նավահանգստում չկա ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ո՛չ երրորդը: Նման դեպքերում ասում են՝ թեւաթափ եղա: Բայց ոչ երբեք «Արմենիա»-ի վրա: Եվ դա ինքնագովություն չէ: Ավելի շուտ գործուն փիլիսոփայություն է, երբ մի կողմից համակերպվում ես անխուսափելիի հետ, մյուս կողմից՝ ելք փնտրում անելանելի վիճակից:

Մեզ մոտ պարզապես արգելվում է թեւաթափ լինել: Հենց թեկուզ այն պատճառով, որ այդ «թոշնած» կեցվածքը կարող է, մեղմ ասած՝ չափազանց ցավալի հետեւանքների հանգեցնել: Իրոք, պատկերացրեք՝ բաց օվկիանոսում փորձանքի մեջ ես ընկել բավական չէ, դեռ հուսահատության գիրկն ես ընկնում, այն էլ, երբ քիդ տակ հավերժաբար խաղցած շնաձկներ են վխտում: Եվ վստահ եմ, որ եթե նույնիսկ ոչ մի կերպ չճարենք այդ պոմպերը, ապա Մուշեղի ու Վահագնի նման չափազանց ընդունակ եւ նույնիսկ տաղանդավոր օգնականներ ունենալով, այն էլ ճշգրիտ գիտությունների թեկնածու Արմեն Նազարյանի ուշադիր հայացքի տակ, մեր իսկական էդիսոններ Սամվել Կարապետյանն ու Հայկ Բաղալյանը մի ինչ-որ հրաշք կմոգոնեն, որը կաշխատի, կգործի, կծառայի: Միաժամանակ բոլորն էլ անպայման կխոստովանեն, որ առանց Սամվել Բաբայանի, առանց ինձ (համեստություն չանեմ) եւ մանավանդ առանց կոկի ոչինչ չէր ստացվի: Եվ այնուամենայնիվ լավագույն տարբերակը այդ չարաբաստիկ պոմպերը ճարելն է: Բայց երանի թե խոսքը միայն պոմպերի մասին լիներ: Իհարկե, այս ամենը նրանից է, որ ամենասկզբում չկարողացանք նոր նավ «ճարել»: Սակայն եւ՝ ուշ է այդ մասին խոսել, եւ՝ մեղք: Քանզի այն տպավորությունն ունեմ, որ մեր «Արմենիա»-ն հազար անգամ ավելիին դիմացավ, ինչին չէին կարող դիմանալ հազար նոր, ինչպես ասում են՝ յուղը վրան նավեր:

Պատահական չէ, որ վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ եմ շոշափում մի այնպիսի ոչ ֆնարական թեմա, ինչպիսին նորոգումն է: Ես նույնիսկ ժամանակին մի պատմվածք էի գրել, որի վերնագիրը հենց «Վերանորոգում» էր: Ներկայիս սերունդը, խոսքն իհարկե երիտասարդների մասին է, դժվար թե իմանա, որ կար ժամանակ, երբ «գնել» բայի փոխարեն ավելի շատ շրջանառվում էր «ճարել» բայը: Այ, հենց այդ մղձավանջի վրա է հենված պատմությունը, որի իմաստը սփյուռքում ապրող իմ բարեկամներից ոչ մեկը չէր կարողանում հասկանալ: Իսկ Լուիզ Սիմոնը (80-90-ական թվականներին հայկական բարեգործական միության նախագահը) նույնիսկ նախանձում էր ինձ: Նյու Յորքի իր բնակարանը նորոգելուց հետո որոշել էր սառնարան գնել ու մի ամբողջ շաբաթ տանջվել էր խանութից-խանութ գնալով: Դժվարանում էր ընտրել ավելի քան հարյուր տեսակի, գույնի ու ձեւի մեջ: Եվ ահա, մահու չափ հոգնած, արտահայտվեց. «Ավելի լավ չէ՞ ձեր սոցիալիզմի պայմաններում, որտեղ ոչ միայն գնելու, այլեւ ընտրելու բան չկա»:

Մեր առագաստանավում նման հարցերը լուծվում են, ինչպես հիմա ընդունված է ասել, ինտերնետի միջոցով: Դա արդեն Արիկի ոլորտն է, որը սկսած Նոր Զելանդիայից, օգնության համար դիմում է իր որդի Վախթանգին: Մեր նավում ինտերնետը շատ դանդաղ է աշխատում: Ճիշտ է, Վախթանգն ապրում է Ավստրալիայում (որտեղ միայն չեն ապրում նրա որդիները): Վախթանգին միայն իմանալ է հարկավոր, թե ինչ մասին է խոսքը, երբ եւ որտեղ պետք է հասցնել: Մնացած ամեն ինչ նա անում է ճշգրիտ եւ մեզ համար առանց դժվարությունների: Ինչ վերաբերում է պոմպերին, պարզվում է, որ շուկայական կապիտալիզմի ժամանակ էլ կարող են խնդիրներ լինել: Այստեղ նույնիսկ Վախթանգը ոչինչ չկարողացավ անել: Ջափից դուրս սահմանափակված ենք ժամանակի հարցում: Բայց փոխարենը՝ մենք մի մեծագույն խնդիր ունենք, որը կարող ենք հանձնարարել միայն մեր Վախթանգին (նա արդեն մերն է): Դա կապված է ծովահենների հետ: Բայց այդ թեման՝ առաջիկա ռեպորտաժներում:

Իսկ առայժմ վերադառնանք երկրին, որտեղ գտնվում է «Արմենիա»-ն: Այստեղ հայեր չկան, թեեւ եղել են 17-18-րդ դարերում: Գլխավորապես նրանք էին, ովքեր հիմնավորվել էին Հնդկաստանում: Հույս ունենք գոնե մեկին գտնել: Չէ՞ որ նույնիսկ Ջասկի կղզում մենք իմացանք մի հայրենակցի մասին, բայց դա հեռանալու ժամին էր: Ցիսպրեցինք: Հիշում եմ, թե ինչպես Հռոդոս կղզում կառանվելուց բառացիորեն անմիջապես հետո ես ու Կարեն Դանիելյանը, առաջինն իջնելով ափ, մտանք փիչ հեռվում գտնվող ուղղափառ տաճար: Եվ այնտեղ էլ վաղ առավոտյան հանդիպեցինք երկու հայուհիների: Մայր ու դուստր էին՝ Գոհարը եւ Սվետլանան: Սվետլանայի հայրը՝ ազգությամբ հույն, զոհվել էր Կիրովականում, սեփական տանը 1988 թվականի դեկտեմբերի 7-ին:

Ըստ իս, Շրի Լանկան այսօր միակ երկիրն է, որի անվան մեջ նշվում է «սոցիալիստական» բառը: Ես անվան մասին եմ խոսում, ոչ թե էության: Շրի Լանկայի Դեմոկրատական Սոցիալիստական հանրապետություն: Տարածքով աշխարհում 119-րդն է: 65 հազար քառակուսի կիլոմետր: Բնակչության թվով 53-րդն է՝ 22 միլիոն: Քաղցրահամ ջրի խնդիր ունեն. խմելու ջրի մակերեսը երկու տոկոս էլ չի կազմում: 70 տոկոսը բուդդայականներ են, 15-ը՝ հինդուիստներ, 8-ը՝ քրիստոնյաներ, 7-ը՝ մահմեդականներ: Արդեն երկու տարի է, ինչ երկրում պարետային ժամ է մտցվել: Ճիշտ է, վերջին ժամանակներս ռեժիմը մի փիչ մեղմացրել են: Հակառակ դեպքում ընդհանրապես «Արմենիա»-ին չէին ընդունի Կոլոմբո նավահանգստում: Մեկ տարի առաջ այստեղ իրոք պատերազմ էր, որը, կարծում եմ, չի դադարում արդեն երկուսուկես հազար տարի: Համենայն դեպս, դեռեւս մեր թվարկությունից առաջ 504 թվականին հնդկական Վիջայա արքայազնը նվաճեց Շրի Լանկա կղզին (Ցինգալա) եւ երկար հարյուրամյակներ հնդիկները կառավարեցին երկիրը: Ամենուր ընդգծվում է, որ նրանք մեծ ներդրում ունեն եւ՛ մշակույթում ընդհանրապես, եւ՛ բուսամշակման, բրնձի մշակման մեջ՝ մասնավորապես:

Թող ընթերցողը բոլորովին չզարմանա, որ ես հանկարծ «Արմենիա»-ում սկսեցի հեռավոր կղզու պատմությունից խոսել, ասես «սեփական» թեմաներս փիչ էին: Ընդհանրապես ես ոչ մի բան հենց այնպես չեմ անում: Բազմիցս իմ գրառումներում անդրադարձել եմ աշխարհագրական այն հայտնագործություններին, որոնք երբեմն հիմարություն են ներկայացնում: Օրինակ բերեմ: Մինչ «Արմենիա»-ն կմտնենա Շրի Լանկային (Ցեյլոնին), ես արդեն ամբողջովին թաղված եմ կղզու պատմությանը վերաբերող նյութերի մեջ: Գիտեմ, որ երկիրը բազմիցս նվաճել են: Եվ ընդհանրապես, ավելի լավ կլիներ աշխարհի առաջ ոչ թե բացել ողջ Ամերիկան, Ավստրալիան, Պոլինեզիան, Օվկիանիան, այլ... փակել: Գուցե այն ժամանակ կդադարվեին եւ՛ տաղանդավոր ժողովուրդները, եւ՛ համաշխարհային ամենահին քաղաքակրթության գլուխգործոցները:

Ես մեծ քանակով պատմական նյութեր եմ հավաքել Ցեյլոնի մասին, մանավանդ այն շրջանի վերաբերյալ, երբ այն «հայտնագործեցին» եվրոպական բարբարոսները: Ահա համառոտ ողբերգական ժամանակագրություն. 16-րդ դարում կղզում սպանում եւ ավերածություններ էին գործում պորտուգալացիները, ապա նրանց փոխարինելու եկան հոլանդացիները, որոնք տաղանդավոր վարպետներ էին բաժանելու եւ տիրելու դժվարին ճամփորդությունից հայրենիք վերադարձավ Ցեյլոն կղզով: Գիտեմ եւ այն, որ հյուրանոցներից մեկում վերջերս, Ռուսաստանի Գողոների միության նախաձեռնությամբ, «Գազարդի» եւ Շրի Լանկայում Ռուսաստանի դեսպանության օգնությամբ հուշատեսակ է բացվել եւ տեղադրվել մեծ գրողի կիսանդրին, որն անտեսելը պարզապես մեղք է: Եվ ահա կապվեցի ինձ լավ հայտնի, խորհրդային եւ ռուսական դիվանագիտության լեգենդար վետերան, Հնդկաստանում Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Միխայլովիչ Գանակինի հետ: Խնդրեցի, որ ինձ կապի Շրի Լանկայում Ռուսաստանի դեսպանի հետ, որպեսզի վերջինս կազմակերպի «Արմենիա»-ի անձնակազմի հանդիպումը Անտոն Պավլովիչ Չեխովի հետ: Տասը րոպե անց ինձ զանգեց Շրի Լանկայում Ռուսաստանի գործերով դեսպանին փոխարինող հանձնակատար Եվգենի Նիկոլաեւիչ Սերգիենկոն եւ ասաց, որ ինքը կգա մեզ մոտ՝ նավ: Եվ կգա կնոջ՝ Սվետլանա Արտաշեսի Ատամանյան-Սերգիենկոյի հետ: Հենց այդպես: Գտնվեց այնուամենայնիվ հայուհի նաեւ Շրի Լանկայում: Եվ ես հիշեցի Հռոդոս կղզին:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Հնդկական օվկիանոս

Ուշադրություն

04.06.2011 թ. **«Ազգ»** օրաթերթի թիվ 102 (4721) թողարկման մեջ ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 12-ի թիվ 589-Ն որոշմամբ օտարվող «ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տրանսպորտային միջոցների հայտարարված բոլոր աճուրդները ժամանակավորապես դադարեցվում են:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի վարչություն

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 15.7.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: